Гимбутас Л.

Арт

Lth
2214

1999

ՎՐԷԺ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ՎԱՐԴԱՆ ՔԱՄԱԼԵԱՆ

Առաջին և երկրորդ հատոր

Չորրորդ տպագրութեամբ

Ընդդէմ հայրենեաց երբէք դաւաճան.
Զըլլանք չի՛ք «քիւոան վասակ մերուժան»
Եւ կամ մեր [illegible] թափած ծով արիւնք,
Մոռնան [illegible] քան քուրդը դաժան։

ՀԵՂԻՆԱԿ

ԼԷՕ
ԳՐԱԴԱՐԱՆ

Տպագրութիւն Մ. ԳԱԼՓԱՔՃԵԱՆ
ՎԱՌՆԱ
1908
Մայիս 28 ին

Լեո
2214

Զ ո - Հ Ր

Յարգելի պարոնաց գ. Հ ա ր ց =

Հ ա ղ ա մ ա ն

Սոյն գրքուկիս մէջ հիւրընկալած եմ յայտնի և ծանօթ գրագէտ Տիար Տիգրան Ճգնաւորեանի և Զէյթունցի Յարութիւն Զաքարեանի թուով վեց հեղինակութիւնները։ Կը յուսամ թէ սրանով աւելի ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլամ յարգելի ազգային ընթերցող լսողիս ներուս։

ԳՐԱԴԱՆ

42214-00

Հք. 9248

ՎՐԷԺ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ՎԱՐԴԱՆ ՔԱՄԱԼԵԱՆ

Առաջին և երկրորդ հատոր

Զորրորդ տպագրութեամբ

Ընդդէմ հայրենեաց երբէք դաւաճան.
Զըլլանք չի՛ք «թիւոն վասակ մերուժան»
Եւ կամ մեր եղբարց թափած ծով արիւնք,
Մոռնանք, ուրանանք քան քուրդը դաժան։

ՀԵՂԻՆԱԿ

ՊԵՏԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Ամ.ՍՍՌ
Ա. Ա. Мясникян

Տպագրութիւն Մ. ԴԱԼՓԱՔՃԵԱՆ
ՎԱՌՆԱ
1908
Մայիս 28 ին

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

Օրէնքը գրչին ծայրն է.
Արդարութիւնը՝ սրին,
Իսկ իրաւունքը՝ հրգօրին։

ՀԵՂԻՆԱԿ

ՎՇՏԱՆՔՆԵՐ

Եւ չ'հիւսեցի սիրոյ երգեր,
Ո՛չ յոյլ ծաղկանց նուրբ թերթիկներ,
Եւ ո՛չ ծովեայ ծըփծըփանքներ,
Ո՛չ ալ զովիչ բօլ հովիկներ,

«Այլ իմ ազգի վիշտն ու վէրքեր»։

Դալար մարմանդ ո՛չ պուրակներ,
Շըղարշահիւս թաւշեայ թուփեր,
Ո՛չ ալ գարնան մարգագեաններ,
Եւ կամ թռչնեաց ծիք ծլվլանքներ,

«Այլ իմ ազգի վիշտն ու վէրքեր»։

Կարկաչահոս ո՛չ գետակներ,
Ո՛չ ալ ամառ, աշուն, ձմեռ,
Եւ ոչ անծայր ովկիաններ,
Նըրանց խուլ խոր գորշկուն եթեր,

«Այլ իմ ազգի վիշտն ու վէրքեր»։

Եւ կամ կարապ ճանճահաւեր,
Արբայ առծիւ մէջ ամպերու,
Բաղմած գահոյն երկնի երկներ,
Ուշիոտ թռչնեաց անհուն դարեր,

«Այլ իմ ազգի վիշտն ու վէրքեր»։

Ո՛չ ալ սօսի հըսկայ ծառներ,
Նորանց հոլա ո՛չ ճոճանքներ,
Որ կան բռնած լանջք ու լեռներ,
Գլուխք նեռած, օն դէպ եթեր,

«Այլ իմ ազգի վիշտն ու վէրքեր»։

Ո՛չ «սիրամարք» շուշանիկներ,
Ո՛չ նունուֆար մանիշակներ,
Ո՛չ ալ նոցա պիշ նայուածքներ,
Պէս կոյսերի ծածկուն դէմքեր,

«Այլ իմ ազգի վիշտն ու վէրքեր»։

Լուսնի շողքով ո՛չ նաւակներ,
Ո՛չ ալ թիանց ֆշֆշրանքներ,
Կամ գոռ կոհակք ալկիհօններ,
Ցորձանք տալով ժայռաց ի վեր։

«Այլ իմ ազգի վիշտն ու վէրքեր»։

ՎԷՐՔԵՐ

Գնա՛ գրքոյկ իմ պաշտելի,
Հայ եղբարքըս տեսնելու,
Եւ բաց սիրաբդ նոցա առջեւ,
Խոր խոցերըդ ցոյց տալու։

Պատմի՛ր նոցա Հայրենիքի
Սեւաբազդիկ վիճակըն.
Եւ թէ ինչպէ՛ս հէգ զաւակունք,
Մեռնում, կորչում բանտերըն։

Խօսի՛ր նոցա որ չը ճնան,
Դառնան իւրեանց տները.
Խօսի՛ր նոցա թէ՝ ձեր տիկնայք,
Քաշում տանում քիւրտերը։

Խօսի՛ր նոցա վառ սրտերին,
Աղի արցանց ծոր-ծորը.
Որ մի բոպէ չունին հանգիստ,
Աղերսում են առ Տէրը։

Խօսի՛ր նոցա, որ ձեզ՝ հայեր,
Բաւ է ծաղրեն ազգերը.
Մարդ մը կ'ապրի պատուի համար,
Որ չ'արատէ օտարը։

Գնա՛ գրքույկ. դու իմ եղբարց,
Տուր ականջաց քո ձայնը.
Գուցէ նոքա ազատ կեանքում,
Մոռցած լինին զամենը . . . :

ՀԱՅԻ ՏՂԱՅ

Մի՛ լինիր երկչոտ.
Միշտ եղիր քաջսիրտ.
Որ ըլլաս տէրը
Ապահով կեանքիդ։

Թէ օրէնք արդար
Իրաւունք ուզում,
Սուրը միշտ՝ ամուր
Բռնիր քո ձեռքում։

Եւ սիրիր սրտով
Եղբօրըդ սիրով,
Ապա կը յաղթես
Թշնամիդ ատով։

Ըլլայ որ խաբուիս
Քո ոսոխ կրքէդ,
Զքեզ կը հանէ
Կենսական փառքէդ։

Վերջին զղջումէդ
Զես քաղիր օգուտ,
Կը տանի անդարձ
Յաւիտեան կորուստ։

Թէ չըլլաս պաշտպան
Հայրենի հողիդ,
Քո յաղորդ սերունդ
Վայ կուտայ գլխիդ։

Զանա՛ որ լինիս
Նման քո նախնեաց,
Զնչես թշնամիդ
Քո սուրը հայրենեաց։

Եւ չիրմիդ վրայ՝
Որպէս դրօշակ,
Ծածանուի անուանդ
Յաւէրժ յիշատակ։

ՀԱՅԻ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Եւրոպական մեծ պետութիւնք
Գումարուեցան Պերլինում,
Վեհաժողով, նիստ կազմեցին։
Եօթանասուն ութ թուում։

Անկեալ ազգաց խնդիրները
Այնտեղ քննել սկսան,
Համախորհուրդ յանձնն առին
Պաշտպան լինել անտէրին։

Ահա դարի քառորդն անցաւ,
Ոչինչ չարան իրական.
Դեռ նոյն ցաւով տանջւում ենք,
Չը բուժեց մեզ Եւրոպան։

Երեք հարիւր վաթսուն հազար
Հայ անմեղներ զոհուեցան.
Հրաժարուեց անգութ Եւրոպ՝
Այս մեծ հարցի ձեռնարկման։

Մեր հայկական հարցը մի ցոյց,
Լոկ մատեանում գրեցին.
Իւրեանց խոստմունք զլանալով,
Մեզ անպաշտպան թողուցին։

Ողբ, հառաչանք, յորդ արտասուք,
Հային բաժին հանեցին.
Արդ, ցաւերնիս կրկնապատկեալ,
Մեզ արեան ծով ձգեցին։

Մեր վերքերը բացին խորին,
Անսպեղան թողուցին.
Անբուժելի անթիւ ցաւոց,
Ենթարկելով լռեցին . . . ։

ՀԱՄԲՈՅՐ ՀՐԱԺԵՇՏԻ

Եկ տո՛ւր, մայրիկ, քո համբոյրը,
Պիտի գընամ Հայաստան.
Տամ իմ կեանքըս վեհ հայրենեաց
Վերանորոգ փրկութեան,

Արդէն մայրի՛կ, երբ ալ լինի,
Մի օր պիտի ես մեռնիմ։
Ինչո՞ւ ազգիս ազատութեան
Այն Սուրբ Գործին չը զոհուիմ։

Մի՛ լար, մա՛յրիկ, իմ անուշիկ,
Անհրաժեշտ պիտ՝ երթամ։
Թէ որ մեռնիմ, ետ չը դառնամ,
Ցաւ քս սրտին թող չըլլամ։

Որովհետեւ իմ ինկած տեղ,
Անթիւ ծաղկունք պիտ՝ բուսնին.
Նոր կեանք, նոր փառք պիտ՝ աւետեն
Մայր հայրենի աշխարհին։

Իմ հարազատ ազգ, հայրենիք,
Ի՛նչպէս՝ մայրիկ, ուրանամ։
Զիք Վասակայ, Մերուժանայ
Նմաններուի կարգ մտնամ։

Թէ քս լացին ուշ դնեմ ես,
Իմ քաղցրի՛կ մայրիկս,

Զիս սնուցող հայրենեացս
Առջեւ կ'ըլլամ սեւերես։

Երբեք, մա՛յր իմ, դու չի կարծես
Թէ ձըրի տամ իմ արեւ.
Անթիւ քուրդեր պիտ՝ տապալեմ,
Ապա հոգիս աւանդեմ։

Լե՛ր դու ուրախ, իմ կմիոգին։
Ազգիդ ծաղկեալ գարունով.
Արշալոյսի այն նոր ծագման,
Ողջունես իմ գերեզման։

Ամեն ծաղկունք՝ իր թփերից
Պիտի հնչեն Հայաստան
Որպէս սոխակք կը դայլայլեն
Գարնանային գալստեան

Մի՛թէ ես չե՛մ Հայաստանի
Առիւծասիրտ հայ տղան,
Որ չը գնամ հուր կայծակներ,
Թափել քուրդի գլխիկան։

Շո՛ւտ բեր, մա՛յրիկ, իմ զէնքերը,
Ժամանակ չէ կենալու.
Ահա՛, հնչեց փողը մարտի,
Պէտք է երթամ կռուելու։

Բիրտ քրդային բռնութիւններ
Քակեց, քանդեց մեր տներ.

Անմեղ արեանց հոսող գետեր
Զը դադարան վեց դարեր։

Հայ արիւնով ոռոգուեցաւ
Ամեն խոռոչք ու խորքեր.
Վա՛խ, մեր ազգի սրտին վրայ
Բացուեց մե՛ծ մեծ խոր վէրքեր։

Ա՛խ դու, մա՛յրիկ, հերիք է լաս,
Պահէ այդ քո արցունքներ.
Երբոր դառնամ յաղթանակաւ,
Լուսաս իմին այն վէրքեր։

Այլ ես կ'երթամ ի պատերազմ՝
Լացի փոխան դու խնդա.
Թող ես մեռնիմ, միայն ազգիս
Ազատութիւն ըստանայ։

ԲԱՒԻ Է ՆԻՐՀԵՆԵՔ

Ահա՛ մեր մայրը ցաւի երկունքում,
Ցոյսը մեր վրայ դրած, սպասում։
Հոգեվարքի մէջ ընկած տառապում,
Դեռ մենք քարացած, խորդ խորդ ենք նայում։

Շտապենք եղբա՛ր, տանք նորան դեղ, ճար,
Որ կանգնի ոտքի հարազատ մեր մայր.

Մինչ ե՞րբ մենք այսպէս մնամք անտարբեր,
Առանց նորան մենք կորուսա ենք, Հայե՛ր։

Քանի՞ մէկ քանի լռենք, եղբայրներ,
Վեց դար շարունակ, որպէս սարուկներ.
Մենք առանց հովուի ցրուեալ ոչխարներ,
Հերի՛ք գայլերի ըլլանք բաժիններ։

Բա՛ւ է մեր գերեաց լինենք գերիներ,
Նոցա ոտքի տակ դնենք գլուխներ.
Ո՛վք են, մեզ նոքա լինին իշխողներ,
Ծրծեն մեր արեան վերջին կաթիլներ։

Ելնե՛նք, տանք նորանց հուժկու հարուածներ,
Մարտի դաշտն է մեր կեանքի լաւ ժամեր.
Մի՛թէ քաջ Հայկայ մենք չե՞նք սերունդներ,
Որ չառնենք մեր վրէժ նրանցմէ, Հայե՛ր,

Հերի՛ք է ճգնենք բանտի յատակներ,
Մաշեն մեր հոգիք կապանք, շղթայներ.
Բա՛ւ է մեր կանայք, դստերք, երախայք,
Զոհէ թշնամին անթիւ, անհամար։

Դէ՛հ ելնենք, եղբա՛ր, իջնենք մարտի դաշտ,
Լուծենք մեր վրէժ, զէնքերով անհաշտ.
Թէ որ մենք այսպէս, միշտ մնանք թմրած,
Զըլլար փրկութիւն, խպառ ենք կորած։

Մինչ երբ մեզ տեսնենք օտարից ատուած,

Միշտ նրանց առջեւ վիզերնիս ճկուած,
Լոգան մեր սրերք մէջ նորանց արեան,
Լինենք մեր անձին տէրը մեզ պատկան։

Բա՛ւ է հայրենեաց անվերջ դաւաճան,
Ոսոխ թշնամիք մեր վրայ խնդան.
Ըլլանք մեր յեանոց անմահ պարծանքներ,
Որպէս մեր քաջքն Վարդան, Վահաններ։

Մեզնից վերցնենք մեզ քանդող Եսեր,
Հերիք մէկ մէկի ցանենք որոմներ.
Մեր մայրը մէկ է, մենք ենք եղբայրներ,
Մենք պիտի փրկենք մեր աշխարհն աւեր։

—»»»✿«««—

ՍՈՔԱՊԻ ԳԱՐՈՒՆԸ

Բնական է որ սոխակն
Խիստ սիրում է վարդենին,
Նաիլ երգել թփին վրայ
Իւր քաղցրիկ մեղեդին։

Նա ջերմ սիրով փափաքում է
Գարնանային գալստին . . .
Որ տայ սիրոյ համբոյրները,
Կարմրատայտ վարդերին։

Թրթռում է ընքոյչ սիրտը
Հէգ սիրահար էակին,
Ցեանել գարուն և դայլայլել,
Իւր հայրենի մէջ հողին։

Դեռ նա կ'ողբայ մելամաղձոտ,
Սրտի խորքէն մեղեդին,
Թէ իւր ձեռքէն որպէ՞ս թռաւ
Այն գարունը թանկագին...։

Եւ թեւերը գլխին քաշած,
Ողբերգում է սգագին.
Մի՛թէ այն վեհ գարնան նման
Պիտ՝ չի տեսնէ՞ նա կրկին։

Ա՛խ անիրաւ, անգութ տարերք,
Ի՞նչ էք ուզում սոխակէն.
Թողէ՛ք նորան ազատ երգել
Իւր հայրենի վայրերէն։

Նա վաղուց է մեղեդիներ
Արձակ ձայնով չէ յորդեր.
Փոթորկալի եղանակներ,
Պատճառում են տրգելքներ։

Նամանաւանդ հիւսիսային
Սաստիկ հողմըն փչում է...
Կայծակի շանթ արձակելով
Մռնչում ու փնչում է։

ՁՕՆ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶՆԱՓԱՌ

ԻԶՄԻՐԼԵԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ

Հրաւիրուեցար ի մեծ Սիոնէն
Նեռն ապշած նայեց ոճրանիւթ գահէն,
Ինչպէս ծաղկազարդ մուտքդ յաղթական,
Նոր օր և նոր կեանք տուիր հայութեան։

Եւ ահա արդէն բազմած կաս գահոյդ,
Գահ մ'ալ թափուր կայ յառած քո սիրոյդ,
Որ անդ հրատապ հարցերը ազգիդ
Պիտի յանձնուի երկաթէ կամքիդ։

Որը նախորդիդ ձեռնարկած գործին
Պիտ՝ գլուխ անցնիս սրբութեամբ հարցին,
Լիայոյս սրտով դէպ քեզ ենք յառած
Վըճիռդ արդար տեսնենք իրականած։

Մենք սրտատրոփ նայում ենք անհամբեր,
Բուժել քո ձեռքով անհուն մեր վէրքեր.
Դա արդէն իրօք վեհէդ է կախուած,
Տալու մեր ձեռքը մեր իրաւունքներ։

Որը թողնում ենք գթառատ խղճիդ,
Խղճա՛, վեհափա՛ռ քո խղճուկ հօտիդ,
Լեր մեզ փրկողը ժանտ շղթաներից,
Դարերով պնդուած գորգեան հանդուցից։

Կեցցե՛ս դու յաւէտ մեր մեծ վեհապետ,
Կեցցես բազմատանջ ո՛վ քաջդ հովուապետ,
Տէր մեր սրբազան հայրիկ Իզմիրլեան,
Պարծանք պաշտելի համայն հայութեան։

ՁՕՆ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶՆԱՓԱՌ

ԻԶՄԻՐԼԵԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ

Հրաւիրուեցար ի մեծ Սիոնէն
Նեռն ապշած նայեց ոճրանիւթ դահէն,
Ինչպէս ծաղկաղարդ մուտքդ յաղթական,
Նոր օր և նոր կեանք տուիր հայութեան։

Եւ ահա արդէն բազմած կաս դահոյդ,
Դահ մ'ալ թափուր կայ յառած քո սիրոյդ,
Որ անդ հրատապ հարցերը ազգիդ
Պիտի յանձնուի երկաթէ կամքիդ։

Որը նախորդիդ ձեռնարկած գործին
Պիտ' գլուխ անցնիս սրբութեամբ հարցին,
Լիայոյս սրտով դէպ քեզ ենք յառած
Վըճիռդ արդար տեսնենք իրակնած։

Մենք սրտատրոփ նայում ենք անհամբեր,
Ցուժել քո ձեռքով անհուն մեր վէրքեր.
Դա արդէն իրօք վեհէդ է կախուած,
Տալու մեր ձեռքը մեր իրաւունքներ։

Որը թողնում ենք դիտառատ խղճիդ,
Խղճա՛, վեհափա՛ռ քո խղճուկ հօտիդ,
Լեր մեզ փրկողը ժանտ շղթաներից,
Դարերով պնդուած գորգեան հանգուցից։

Կեցցե՛ս դու յաւէտ մեր մեծ վեհապետ,
Կեցցես բազմատանջ ո՛վ քաջդ հովուապետ,
Տէր մեր սրբազան հայրիկ Իզմիրլեան,
Պարծանք պաշտելի համայն հայութեան։

ԶՕՆ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶՆԱՓԱՌ

ԻԶՄԻՐԼԵԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ

Հրաւիրուեցար ի մեծ Սիոնէն
Նեռն ապշած նայեց ոճրանիւթ գահէն,
Ինչպէս ծաղկազարդ մուտքդ յաղթական,
Նոր օր և նոր կեանք տուիր հայութեան։

Եւ ահա արդէն բազմած կաս գահոյդ,
Դահ մ'ալ թափուր կայ յառած քո սիրոյդ,
Որ անդ հրատապ հարցերը ազգիդ
Պիտի յանձնուի երկաթէ կամքիդ։

Որը նախորդիդ ձեռնարկած գործին
Պիտ' գլուխ անցնիս սրբութեամբ հարցին,
Լիայոյս սրտով դէպ քեզ ենք յառած
Վրճիռդ արդար տեսնենք իրականած։

Մենք սրտատրոփ նայում ենք անհամբեր,
Բուժել քո ձեռքով անհուն մեր վէրքեր.
Դա արդէն իրօք վեհէդ է կախուած,
Տալու մեր ձեռքը մեր իրաւունքներ։

Որը թողնում ենք գթառատ խղճիդ,
Խղճա՛, վեհափա՛ռ քո խղճուկ հօտիդ,
Լեր մեզ փրկողը ժանտ չղթաներից,
Դարերով պնդուած գորգեան հանգուցից։

Կեցցե՛ս դու յաւէտ մեր մեծ վեհապետ,
Կեցցես բազմատանջ ո՛վ քաջդ հովուապետ,
Տէր մեր սրբազան հայրիկ Իզմիրլեան,
Պարծանք պաշտելի համայն հայութեան։

Որչա՜փ կ'ուզէ, թող նա փչէ,
Մեր սոխակին հոգը չէ.
Այդպէս օրեր շատ տեսեր է,
Ձմրան վերջը գարուն է...։

Զը կայ մի ինչ աշխարհումս
Որ չը լինէր փոխփոխուն,
Եւ հիմնապէս նա իւր տեղում
Մնար ընդ միշտ մնայուն։

ՔՈՅՐԸ ԵՒ ԵՂԲԱՅՐԸ

Մասիս

Ես Մասիսս սև քօղուած եմ,
Դու չե՞ս տեսներ, Արա՛րատ.
Այդպէս անհոգ, զուարթերես,
Որպէս արքայ բազմեր ես։

Արարատ

Մի՛ նորոգեր իմ վշտերը,
Քո՛յր իմ; անո՛ւշ հոգեակը.
Ա՛խ, յաւերս խիստ, խիստ շատ են,
Կորուսեր եմ իմ թագը։

Մասիս

Այն օրուանից տխուր ամպուած,
Գլխիս քաշած սեւ քողը.
Հառաչանքներ արձակելով,
Կը փնտռեմ իմ տէրը։

Ադարաս

Հայկ ու Տրդատ, Տիգրան, Արամ,
Կորուսի այն վեհազներս.
Արդեօք նոքա ուր են նիրհում,
Դան վարատեն այս ցաւերս։

Մասիս

Երբ կը տեսնեմ օտարազգիք,
Որ մեր վրայ իշխում են,
Սրտաճմլիկ քողիս տակէն,
Աչքէս արցունք հոսում են։

Ադարաս

Այդ նեռերը արձակելով,
Հոգւոյս տունը մի՛ քանդեր.
Արդէն վերքով ես անթիւ եմ,
Մաշուած սիրտը մի՛ ծակտեր։

Մասիս

Հրաչեայ, Պարէտ, Զաւէն, Շաւարշ,
Ո՞ւր են անյաղթ վեհազնիք.

Այն քաջ խրոխտ առիւծներից
Սարսում էին թշնամիք։

Ադարաս

Ո՜հ այն տիպար Հայկազունքըն,
Երբ ինձանից խլուեցին,
Փառաց օրերս դորշոտուեցան,
Իկան մշուշը իմ գլխին։

Մասիս

Կար ժամանակ մեր ճակատին,
Առիւծ, վիշապ դրօշակ.
Ամէն մի ազգ խոնարհում էր,
Մեր քաջերի տիգաց տակ։

Ադարաս

Վա՜յ դիր, քոյր իմ, այդ թախծալի,
Հոգեհանիչ խօսքերին...
Յիշեցուցիր այն օրե՛ր՝
Մեծն Պարոյր արքային.

Մասիս

Է՞ր չը յիշեմ այն դարերը...
Կամ երազ էր կամ իրաւ.
Բազէ, արծիւ ծածանում էր,
Դաղաթներէս, որ թռաւ։

Ադարաս

Շանթի նման հարուած տուիր,

Իմ վիրաւոր թոյլ կրծքին.
Մտաբերի յաղթող արքայն,
Մեծն Արտաշէս Պարթեւին։

Մասիս

Ո՞ւր են արդեօք իմ հարազատ,
Թորգոմատան որդիքը՝ . . .
Մի՛թէ այն օր պիտ՝ չլինի՞,
Նոքա նստին իմ գիրկը։

Արարատ

Ես իմ յոյսս չեմ կորցրած,
Այն վեհ քաջաց սերընդէն.
Անհրաժեշտ պիտ՝ փրկեն
Մեզ այս սրգոյ օրերէն։

ՄԵԶՆԻՑ Է ԿԱԽՈՒԱԾ

Բա՛ւ է, հայե՛ր, գլուխ ծռենք,
Ժամանակ է զինուելու.
Ճակատ պարզենք դէմ թշնամեաց,
Մեր պատիւը փրկելու։

Քանի՛ մէկ դար պիտի այսպէս,
Մենք ենթարկուենք քայքայման.
Մեր բազուկն է մեզի փրկող,
Անվերջ սիրով անսահման։

Միշտ կորչում է հայութիւնը,
Զուրի ոչ մի օգնական.
Իսպառ կ՝ուզեն նորան ջնջել,
Խլել ձեռքից Արմենիան։

Նոր Վահաններ, նոր Վարդաններ,
Հանդէս թող դան ազգութեան.
Անտէր Հայոց սուրբ դիակներ,
Բա՛ւ է լինին տեսարան։

Մեր յոյսերըն երբե՛ք, եղբարք,
Այլոց վրայ թող չըլլան.
Մեր շողշողուն զէնքերովը,
Մենք պիտ՝ լինենք մեզ պաշտպան։

ԼԵՕ
ԳՐԱԴԱՐԱՆ

Թէև քրդերք միշտ հաշուած են
Հայաստանը սեփական.
Բնական է յիմարները
Շատ սխալներ կ՝ունենան։

Ազի ճիչեր արձակումից,
Թո՛ղ ալ լռէ մեր բերան.
Տանք իրաւունք մեր զէնքերին,
Տեսնեն նորանց դատաստան։

Մեր կոյս աղջիկ ու հարսունքներ,
Մինչ ե՞րբ ծածկեն սեւ բոզեր.
Խաւար բանտի կապանքները,
Մեզի լինին բաժիններ։

Դէ՛հ չուտ, եղբա՛ր, ելնենք զինուինք,
Սարկուելեան վերջ տանք մենք.
Մեր օրերով նոցա արիւն,
Որպէս գեռեր հեղեղենք։

Երբե՛ք, երբե՛ք յոյս չի դնենք,
Նենք չքերի խօսքերին.
Կեղծ սրտերով բաւ է նոքա,
Մեզի մատնեն սեւ հողին։

Ելնե՛նք, ելբա՛ր, շտապենք մենք,
Գնա՛նք, գնանք մարտչելու.
Ժանտ թշնամու անարդ լուծը,
Մեզնից խպառ վերջ տալու։

ՍԳԱԴՈՒ ՄԱՅՐԻՆ

Մա՛յրիկ մինչ ե՞ր քեզ սեւ բօղով,
Պիտի տեսնենք շղարշուած.
Ալ չենք կարող մենք հանդուրժել,
Տեսնել այդպէս անբուժուած։

Ա՛ր, որդիքդ թեւ ենք առած
Սաւառնում ենք քո վրադ.
Երբեք պիտի չառնենք դադար,
Մինչեւ չ'երգես դու ազատ։

Մի՞թէ քեզի վիճակուած է,
Միշտ տանջանք ու տառապանք.
Ո՛չ, ո՛չ այդպէս քեզ չենք թողներ,
Շուտ կ'ստանաս դու նոր կեանք։

Մենք ուխտեր ենք՝ թափել վերջին,
Մեր արիւնը բոսորակ.
Ո՛չ, սրերնիս պատեան չ'իջներ,
Մինչեւ չառնենք յաղթանակ։

Քո սուրբ կրծքին պիտ՝ ծածանենք,
Ազատութեան դրօշակ.
Այդպէս լքուած ու կաշկանդուած,
Պիտ՝ չի թողնենք ոտքի տակ։

Քո անդրանիկ և հարազատ
Որդւոց փառքն ու պարծանք,
Անհրաժեշտ պիտի տեսնես
Այն վեհ յաւէտ բերկրանք։

Ահա՛ մօտ է, թշնամիքդ.
Որ պիտ՝ տեսնես խոնարհուած.
Նոցա կեանքը քեզի դրաւ
Պիտի ընենք անկասկած։

Այն փշալի անապատներդ
Պիտի ըլլան բուրաստան.
Դարձեալ պարծանք վեհ աշխարհին,
Դու պիտ՝ լինիս Հայաստան։

Գեհոն, Փիսոն, Տիգրիս, Եփրատ,
Ցնծա՛ Եդեմ պիտ՝ գոչեն.
Ծափ խփելով ափունքները,
Պարեպտոյտ պիտ՝ թռչին։

Արդէն, մա՛յրիկ, մեր արիւնով
Լուանում ենք վէրքերդդ.
Կեանք չենք խնայում քո կենացդ,
Մինչեւ տեսնենք բուժուելդդ։

ԱՍՏՈՒԱԾ

Ա՛խ, դու Աստուած, Հայոց ազգին,
Դեռ պիտ՝ լինի՞ս մոռացող.
Նա իւր կեանքում երբեք՝ քեզի,
Ո՛չ, չէ եղած ուրացող։

Մի՞թէ չը կայ այդ սրտումդ
Մանանխի չափ խղճմտանք,
Որ չես ուզում տեսնել Հայի
Այս դարւոր գերգերանք։

Սա բնական չնաշխարհի
Ամէն վառքէն զրկել ես.
Դա չէ օրէնք Աստուածութեան
Որ տառապման մատնել ես։

Վրաց չունիս ո՛չ դատաւոր,
Ո՛չ դատաստան, ո՛չ իշխան.
Անհարց, Հային ուզարկում ես,
Խոր ու խաւար գերեզման։

Հայի ողբին անուշադիր,
Անկարեկից մշտական,
Ա՛խ, անաստուած, մինչ ե՞րբ անտես
Պիտի լինիս մեր անկման։

ԳՈՎԵՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Դրախտավայր Մայր Հայաստան,
Զորս գետ ունիս աննման.
Հովիտներդ ծաղիկներով,
Գեղատիպար բնական։

Խիստ կը փայլիս աստղի նման,
Հրաշազարդ տեսարան.
Գերազանց ես ամեն դիրքով,
Ո՛վ հոգեակ իմ պատուական։

Անտառներդ մեղրը և կաթ
Ծործորում են մշտական.
Վճիտաձաղ աղբիւրներդդ
Կեանք բաշխում են մարդկութեան։

Մագսոնիան, Զուիցերիան,
Ոչ Նորվէկիան քեզ կուգան.
Բնաւ չի կայ քեզի նման,
Ճնաշխարհիկ հայկական։

Գեհոն, Փիսոն, Տիգրիս, Եփրատ,
Ոռոգում են դաշտերդդ.
Ամեն ազգաց սուրբ գրքերդն,
Նկարեր են գովեստդդ։

Եւ բիւրաւոր ծաղկունքներդդ,
Հիւսուած նոճեաց ճակատերին.
Ա՛խ, օտարաց ես բուրաստան,
Ո՛չ որդւոցդ, հայերին։

ԸՆԴԴԷՄ ԵՒՐՈՊԻՈՅ

Եւրո՛պ, մինչ ե՞րբ հայուն խաբես,
Մատով ցոյց տաս մատեանը.
Դու խիզճ չունի՞ս, գրիչ անմեղ
Մանուկների արեանը։

Դեռ չը տեսանք մենք քեզանից
Նշոյլի չափ բարիք մը.
Համբերելով մեր կեանք չիջաւ,
Զը գործեցիր հրաշք մը։

Եւրո՛պ, ինչո՞ւ չուտ մոռացար.
Այն քո հպարտ խօսքերին,
Որ երբ հայը ներկայացաւ
Վեհաժողով ատենին։

Դու ասացիր պիտ՝ ծածանենք
Դրօշակն ազատման.
Հապա ինչո՞ւ չեղոքացար,
Ո՞ւր է խոստմունքդդ իրական։

Նայի՛ր դէպի Հայաստանը,
Սեւ քօղով է ծածկուած.
Անմեղների դիակներով,
Լեռներ, ձորեր կուտակուած։

Ո՛վ դու Եւրոպ, մի ուրանար,
Արդար արեանց իրաւունք.
Իրագործէ՛ այն խոստմունքդդ,
Բա՛ւ է թափուին մեր արիւնք։

Միլիոնկներով, հա՛, խաբում ես,
Հայի դժբաղդ սերնդին.
Ա՛խ, շահամոլ քեզ Եւրոպա,
Մնացեր ենք քո խղճին...։

ԱՀԱ ԺԱՄԱՆԱԿՆ Է

Ահա՛, հայե՛ր, ժամանակն է,
Ոխ ու վրէժ լուծելու.
Մեր ժանգոտած թերեր՝ նոցա
Արիւններով լուալու։

Թողնե՛նք, եղբա՛ր, քէն ու նախանձ,
Տանք ձեռքերնիս միմեանց.
Մեր հարազատ սուրբ հայրենիք,
Հերի՛ք լինի խշտիկ շանց։

Առիթ չը տանք որպէս առիւծ,
Իսկոյն իջնենք մարտի դաշտ.
Հրոյճարակ ընենք ամբողջ
Այն խուժանը զրադաշտ։

Մեր ոխերիմ չիք թշնամեաց,
Մինչ ե՞ր ծնկի գանք առաջ,
Եւ գլխահակ մնտենալով,
Առնել պագնել ձեռքերն աջ։

Արդէն նոքա որպէս վիշապ,
Հուպ տալ կ'ուզեն հայերիս.
Եղբա՛ր, դարձեալ թմրա՞ծ մնանք,
Զը պաշտպանե՞նք անձերնիս։

Այն վայրենի քիւրտ վոհմերին
Բաւ չէ՞ ըլլանք ծաղրելիք,

Որք հայ կինը ու աղջիկը
Անում իրանց հարէմլիք . . . ։

Քանի՛ դարեր մնանք այսպէս,
Հաճոյքներին գործիքներ,
Եւ հնազանդ, հլու ծառայ,
Կրել անվերջ հարուածներ։

Օ՛ն, ընթանանք սուսերամերկ,
Հերի՛ք նոցա տեղիք տանք.
Այն տեղն է մեր կեանքի ազատ,
Սուրբ փրկութեան յաւէրժանք։

Ո՛չ զէնքերի որոտումը
Վախ թող չ'ազդէ մեր սրտին,
Օ՛ն, գոռ ռազմի ահեղ դաշտում
Կռիւ մղենք շունչ վերջին։

Եւ սրախող անենք նրանց,
Ո՛չ, չը թողնենք մի հատին.
Բա՛ւ է նոքա մեր թիկունքին,
Խօսին, իշխեն մեր անձին։

Ահա՛, հայե՛ր, ժամանակն է
Ոխ ու վրէժ լուծելու.
Մեր պոպպատեայ սրերք նոցա
Սրտերու մէջ խրելու։

ՎՇՏԱԼԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Ա՛խ հայրենիք, մինչ ե՞րբ այպպէս,
Դլխիդ տեսնեմ սև քօղը.
Վատ, զաղրելի թշնամիքըն
Լինին վրադ իշխողը։

Երբ ես ծնայ քո սուրբ ծոցում,
Նախ ուխտեցի քեզ սիրել.
Այդ դարեւոր ժանգոտ շղթադ
Պարանոցէդ փըշրել։

Որովհետեւ անտանելի
Նախատանք է ինձ համար,
Որ ես տեսնեմ քիւրտ ցեղերը
Քեզի իշխեն, հա՛յ աշխարհ։

Մէջըդ հանդչող վեհազնեի
Դամբարանքըն քայքայուած.
Ձիգ դարերով ոտքի կոխան,
Բաւ է տեսնեմ ցրցրուած։

Թէ որ կեանքըս ես խնայեմ,
Քո կենացը զոհելու.
Աչքիս լոյսէն թող զրկուիմ,
Դէմքըդ անգամ տեսնելու։

Անջնջելի պիտի ճնայ
Այդ քո սէրդ իմ սրտում.

Մինչ ուանդեմ ես իմ հոգիս,
Քու անուշիկ սուրբ գրկում։

Պայծառ օրերը, պայծառ արեւք,
Ա՛խ, տեսնէի՛ քո վրան.
Յե՛տ ժպտանքով տայի հոգիս,
Հանդչէի սրտումդ մայրական։



ԱՌ ՅԵՐԿԻՆՍ

Ա՛նխիղճ երկինք, ե՞րբ պիտ՝ գթաս,
Պիտի լսես հայերիս.
Մի՛թէ չի կա՞յ քեզի Աստուած,
Որ դու բուժես ցաւերնիս։

Մառախլապատ խոպոպ ամպերդ
Իջեցուցիր մեր գլխին.
Եւ քո գռներ հային համար,
Դու գոցեցիր մըշտագին։

Արդեօք ո՞ւր է արդարադատ
Այն անաչառ կշիռդ.
Ի՞նչ է այս քո դարէ ի դար,
Մեզ տանջելդ ու ատելդ։

Քո բնական հոգագնդիդ

Մէջ՝ մի օրիկ չունեցանք.
Ա՜խ, անիրաւ ու աներես,
Շատ ու շատ են քո յանցանք։

Հրաշագեղ աստղերդ շար շար,
Խիստ փայլում են բարձրէն.
Եւ լուսինը նոցա մէջտեղ,
Պատյա կուտայ լրջօրէն։

Հէգ հայերիս վիշտն նոքա
Միշտ տեսնելով ծաղրում են,
Իւրեանց ցոլուն դէմքեր մեզնից
Դարձնելով սահում են։

Արեգակդ ալ սուր սլաքներ,
Արձակելով մեր սրտին,
Եւ իւր կիզիչ բնութիւնով
Խորովում է մեր հոգին։

Հուր հրաշէկ կայծակովդ ալ,
Մեզ անխնայ կ'հարուածես.
Այդ երկնայնիդ խարազանը
Միշտ մեր գլխին կ'իջուցես։

Գորշ անսահման կապոյտ ծով մը՝
Բիլ մէջն օդին կանգնում ես,
Անձրև կարկուտ ձիւն եթերէդ
Դէպ ի վար վար տեղում ես։

Այդ շիթերը կրծքիդ մօտէն,
Ալ և ահեակ հոսում ես,
Որ հայ սրտից վազած արեան
Ճապաղիքներն անհետես։

Խիտ ամպերի ետեւիցը
Մեր վիճակը դիտում ես...
Եւ դու մեզնից քո պատկերը
Մշուշներով պատում ես։

Ահա՛, ճգնաժամի մէջ ենք,
Հարկաւ այդ դու քաջ գիտես.
Արեան հեղեղներ են վազում,
Դարձեալ չեզոք և անտես։

Քո ինչքո՛վքդ գովենք հայքըս,
Կամ ի՞նչ սրտով փառք տանք բեզ
Որ չը տեսանք դէթ սրբէիր
Մեր արտասուք աղեկէզ։

Մեր դարեւոր հառաչանքն
Երբեք չ'ազդե՞ց երկնքիդ.
Ա՜խ, ցաւերնիս բարձրրանար,
Ծակէր, մտնէր քար սրտիդ։

Օ՜ բոպէներ, ժամեր, օրեր,
Ամիսք, տարիք և դարեր.
Հայ աչքերից չը դադարան,
Արտասուքի հեղեղներ։

Դեռ պիտ՝ այրե՞ս մեր սրտերը,
Ե՞րբ պիտ՝ ցոյց տաս այն օրեր
Որ Հայութեան դրօշակն
Ալ, ծածանուէր քո եթեր։

Ի ՁԷՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Պատերազմի շեփորները,
Ամեն կողմից թող հնչեն.
Մենք անվեհեր, կեռ սուր մեր մէջք
Կապած, շտապ դաշտ իջնենք։

Հերի՛ք խաբուինք դիմակաւոր,
Կեղծ ու պատիր դէմքերէն,
Որք յարաժամ մեզ շոյելով,
Մեր արիւնը քամում են։

Հա՛յք, մեր ջլոտ բազուկները,
Ո՞ր օրերին կը պահենք.
Արդ, հայրենեաց ներկայ վիճակ,
Ահա՛, մենքըս տեսնում ենք,

Հայ մանուկը քրդի սրրից
Զոհ գնալով՝ մեռնում է.
Դեռ չը բացուած ծաղիկ կեանքը,
Գոռ գերեզման տանում է։

Եւ երբ մայրը այս սեւորակ
Ցեսարանը տեսնում է,
Որդեա՛կ, որդեա՛կ հառաչելով,
Այն ալ հոգին փչում է։

Դեռ մենք անշարժ, սառըն սրտով
Մեր վիզ ճըկած նայում ենք,
Թէ իւր կիրքը որպէ՛ս յագում,
Վայրագ քուրդը գազան, նենգ։

Լաւ է, եղբա՛ր, մեր մահ կնքել
Քան թէ տեսնել Հայրենիք
Կամ հարազատ սիրելիներ՝
Նոցա ձեռին խաղալիք։

Մեր թշնամիք բա՛ւ է կարծեն,
Արամեանքըս երկչոտ ենք.
Հրացան ձեռներըս իջնենք քաջ քաջ
Դէմ առ ընդդէմ խիզախենք։

Մոլի, գազիր ցեղի արեամբ՝
Հայկեան դաշտեր ոռոգենք.
Այս տխրագին սեւորակներ,
Մեզնից յաւէտ փարատենք։

Դէ՛հ, օ՛ն, սլանք դէպի առաջ,
Առաջ, դէպի ձախ ու աջ.
Մեր շանթավառ զէնքերովը,
Զգեստարհենք դա... իժեաց։

ՀԱՅ ԿՂԵՐԸ

Ո՞ւր են արդեօք մեր սուրբ հարքը,
Ձեռքեր առնեն խաչավառ,
Եւ դան հանդէս որպէս Ղեւոնդ,
Խրախուսող սրտեր վառ։

Ո՞ւր են դասքն քահանայեաց,
Պարտաճանաչ երէցներ.
Անձն իրանց զոհ բերելով,
Հանդիսանալ Ղեւոնդներ։

Երբեք նոքա այս սրբազան
Պաշտամունքն չունեցան.
Դորա համար ազգի ցաւերն
Զր ըստ օրէ աւելցան . . . ։

Երբ ասում ենք նոցա՝ տիա՛ր,
Մեզ չի մնաց քաշելիք.
«Մեղա՛յ օրհնածք, ի՞նչ կայ լալու,
Դեռ շատ ունէք տեսնելիք . . . »։

Ահա՛, եղբա՛ր, հայ կղերի
Միշտ մեզ բրգած քարոզներ.
Ալ ի՞նչ հարկ կայ տեսնել քնում՝,
Անուշ անուշ երազներ։

Երբ ձայն լսեն մամոնայի,
Թեւ առնելով թռչում են.

Խաչ ու բուրվառ, մաշտոց, փիլոն
Ի միասին տանում են։

Հոգեհանգիստ, փեսապսակ,
Ուրախ, ուրախ երգում են.
Տաք տաք շոգիք դուրս դուրս տալով,
Անթիւ օրհնենք հոսում են։

Այլ ու ձա ի շարականներ,
Զիլ ձայներով ասում են.
Քիչ մնում է կոկորդներէն,
Լեարդներնին ալ դուրս բերեն։

Բայց երբ ազգին օրհասակոծ
Ճգնաժամը տեսնում են.
Այդ ալ միայն Աստուծոյ դիտէ,
Ո՛ր ծակերը սգում են։

Մեր հոգեւոր իշխաններին,
Ի՞նչ տեղիք կայ բան ասել.
Բանն ասանկ է սրբազանն՝ը,
Ոչ թէ ձեզի բանբասել։

—>>>

ՀԱՅԻ ՎԻՃԱԿԸ

Դարերը շար շար կուգան ու կ'անցնին,
Մեր օրն ու արեւ նոյն խորն է մթին.
Արեան ծարաւի թշնամիներըն,
Դեռ կլծոտում են մեր սիրան ու հոգին։

Մինչ ե՞րբ վշտալի ձայներ եղկելի,
Լսեն մեր ականջք. հարազատների.
Եւ տեսնել վիճակ նոցա զահրելի,
Մատնուած դառըն ճգնաժամերի։

Եւ դեռ դեռահաս ծաղիկ կոյսերաց,
Բռնի քաշկում են մօրանց գրկերէն.
Ծիլ ու բարբանջանք եղուկ ծնողաց,
Ի զուրը, դէպի օդը ցնդում են . . . ։

Հա՛յր, միթէ մեզի դեռ չէ՞ նախատանք,
Նորածին մանկունք հանդէպ մեր աչքի,
Դահիճ խուժանաց դառնում են տափնանք,
Անմեղ մանուկներ դրում են հողքի։

Այլազանների նոզկալի արարք,
Անասելի են նոցա մրոտանք . . .
Լաց ու հեկեկանք, կող ու կողկողանք
Բռնել է զաշխարհ, ազգի ազէտանք։

Ա՛խ, այն ամարդի չիք նենգամիտներ,
Մի՞թէ անընդհատ մեզի իշխողներ,

Կամ մի՞թէ նոցա ոտանց հողաթափ,
Դարերը շարունակ պիտ՝ ըլլա՞նք, հայե՛ր։

Հերի՛ք է, եղբա՛ր, սարսափով լեցուած,
Թշնամեաց թրէն մեր կեանքը կախուած.
Զեռքերնիս ծալած, ապշած, չուարած.
Մէկուսի, մահը հազարի փոխած։

Հի՞մի էլ նիրհենք, հայե՛ր, հի՞մի էլ,
Որ մեր ազգային աւանդ սրբութեանց,
Մեկնում են զօտարք պղծեալ ձեռներն,
Տանել կրքերի յաղթանակ իւրեանց։

Սթափուե՛նք, եղբա՛ր, ալ բա՛ւ է նիրհենք,
Հոլաթեւ բազկաց ուժերը ցոյց տանք.
Ոտի վատերին հուր ու փուր անենք,
Եւ շղթենք զանոնք դէպի խորխորանք։

Կեանքի ասպարէզ դէպի սլանանք,
Պարզենք ճակատներ թշնամու դիմաց։
Հայոց դաշտօրայք, օ՛ն, արեամբ լուանք,
Սրբենք զարատասուք յաջորդ սերնդաց։

ԱՄՏԼ ՄԸ

Առաւօտեան լուսադէմին,
Ամպ մը տեսայ խիստ փայլուն,
Անդէն և անդ գրաւուեցայ,
Նոյա լոյսին վառվռուն։

Ինչպէս ոսոին վրայ վարդը,
Գեղափիթիթ ծաղկումով,
Վառ գոյնովը նախանձ կ'ազդէ,
Անմահական բուրումով։

Ես իմ կեանքում չէի տեսած,
Դորա նման գեղունի,
Իր բնական թարմիկ գոլքով,
Փայլէ տուեր աշխարհի։

Շողշողում է երկնածոցում,
Ադամանդ մը պսպղուն.
Մարգարիտներ այտերիցը,
Կաթկթում է ցողցողուն։

Ծնկի գալով գլուխ տուի,
Երեսս հողին քսեցի,
«Փառք քո անբիծ սուրբ ծագմանդդ»,
Բիւր բիւր անգամ ասացի։

Եւ ուխտեցի չի մոռանալ,
Անգին դէմքը չքնաղուն,

Որ նա ծագեց իմ խոր սրտի,
Վէրքերով լիք էջերուն։

Սա գերդ փայլուն նորեկ աստղը,
Ուշք գրաւէր ազգերուն.
Բայց դեռ նոքա իւրեանց միտքը,
Չը յայտնեցին . . . հայերուն։



ՀՂԹ ԱԶԳԱՍԷՐԸ

Շատ չատերին ճանաչում եմ,
Որք են անկեղծ ազգասէր . . .
Ինչ որ նոցա սրտերի մէջ,
Կան լիք օձեր, չեմ հաշուեր։

Իւրեանց չարքաս լեզուակներով,
Վերէն վարէն թակում են,
Երբ գործնական բաներին,
Տե՛ս, թէ ինչպէ՛ս կծում են։

Հայցէք վիճակ ողորմելի,
Մեր սեւաթաղդ ժողովրդին.
Կարկառեցէք ձեր ձեռները,
Խլել մահէն դժբաղդին։

Տօ՛, անիծեալ, ի՞նչ ես փչում,

Դէ՛հ, այստեղից չուտ կորչիր.
Այդ ձեռներդդ քեզի բռնէ,
Մեր գրպանին մի՛ դպչիր։

Իսկոյն նոցա բերաններէն,
Այս խօսքերը կը լսուին.
«Մենք լոկ միայն պարտաւոր ենք,
Բարին ուզել հայ ազգին»։

ՍԻՐԷ՛ ՀԱՅՐԵՆԻՔԴ

Օտարի վարդին,
Զը փոխես փուշդ,
Կը թունաւորէ,
Ձերդ քնքոյշ կեանքդ։

Սիրի՛ր հայրենիքդ,
Սիրի՛ր հէգ ազգդ.
Սիրի՛ր հարազատ,
Սուրբ հողդ ու քարդ։

Ձ'տաս օտարին՝
Երբեք քո սէրդ,
Որ նա ծաղրանքով,
Շոյէ պատկերդդ։

Թիթեռնի նման
Մի՛ ըլլար անվիա,
Ուրիշի ծաղկանց
Զոհուող միամիտ։

Օտարի ժպտին
Մէջը թոյն լիք է.
Միշտ աշխատում է
Որ քեզ թակարդէ։

Կեղծ բծնանքներով,
Դրաւէ ա՛ռ, ան . . . . .
Մինչ խլէ կեանքդդ,
Դնէ գերեզման։

Թէեւ նա քեզ հետ
Մեղր ու շաքար է,
Բայց սրտում սեր սեւ
Օձեր պտակեր է։

Եւ չունի հանգիստ,
Մտայուզուել է.
Թէ ո՛րպէս քեզի
Գետին տապալէ։

Օտարին անքուն
Դաւին մէջ երբ դուն,
Թէ իյնաս, եղբա՛յր,
Պիտ՝ տաս քո գլխուն։

Եւ կենաց օրերդ,
Քեզնից ա՛լ խզուած.
Անհուն անդունդի
Խոր խորը ընկղմած։

Իսկ հայրենիքիդ
Թէ չըլլաս տէրը,
Մատնես եղբայրդ
Թշնամու ձեռը։

Ո՜հ, յայնժամ ազգիդ,
Կը լինիս միակ,
Աւելորդ, անպէտ
Մի զազիր դիակ։

ՆԱԽԱՆՁՈՒԹԻՒՆ

Ա՜խ, տուն քանդող նախանձութիւն
Ե՞րբ դու Հային պիտ՝ թողնես.
Հաւատարիմ քեզ ծառայող,
Այս կոյր ազգին գերել ես։

Փաթաթուելով օձիքնոցէդ
Եւ պինդ կողմդ հարուել է.
Յարգանքները մատուցելով
Ոտքիկներդ լիզում է։

Եւ պատկերը դիմակի մէջ,
Առած՝ եղբօր մատնում է.
Սա զազրելի քայլերովը,
Ազգին տունը քանդում է։

Կասկածանքի տեղիք չի կայ,
Ո՛չ, ա՛չ նախանձ նենգամիտ.
Սիրոյդ վառուած, ջանք չէ խնայում
Գոհացում տալ սոսկ կամքիդ։

Քանի՜ միլիոն սրտերի մէջ
Այդ թունաւոր սեւ սերմդ,
Սերմանելով որդւոց սրտի,
Յառաջ տանում յաղթումդ։

Քանի Հայը ինքնաճանչ չէ,
Մի՛ վախենար նրանից.
Ո՛չ, նա երբեք իւր երեսը
Դարձընող չէ բեզանից։

Արմատներդդ խոր հիմնել ես,
Զես մաքրուիր հայ սրտից.
Նա պատրաստ է միշտ ջրի տեղ
Խմել եղբօր արիւնից։

Եւ ամեն մի հրահանգդդ,
Կատարում է ճշգրիտ եռանդ.
Անկեղծ սրտով աշխատում է
Սուսիկ բուսիկ նրբութեամբ։

Արդ տեսնում է իւր եղբօրը
Որ թշնամու ոտքի տակ
Աղերսում է, «ո՛հ, փրկէ՛ զիս»,
Նա չէ լսում աղաղակ։

Այդ չէ խորհում այսօր նրան,
Հապա վաղը իմ վիճակ . . .
Զէ՛ որ ինձ ալ համանման,
Պէս պիտ՝ ընեն մի դիակ։

Արդէն հայը վաղուց քեզի,
Բրեր իրան պաշտելին.
Գոնէ ինքդ խղճայ, նա՛ խանձ,
Անմեղ յաջորդ սերունդին։

ՀԱՅԻ ՕՏԱՐԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Հայե՛ր, մինչ ե՞րբ օտարասէր,
Օտարապաշտ պիտ՝ ըլլանք.
Օտարներու կողմն յարելով,
Մեր տները քանդեցանք։

Մերթ Օհանին, մերթ Օմկոին,
Մեր կեանքերը զոհեցինք.
Բայց անգամ մը չեղաւ դորանց,
Որ սրտերը շահէինք։

Յորչափ հլու ծառայում ենք,
Դարձեալ նորանց գէշ՝ աչքին.
Իւրեանց ցոլուն մերկ սրերը,
'Հա, խրում են մեր կրծքին։

Արձակ մեզնից դժգոհանքները,
Միշտ յայտնում են այս մարդիկ.
—Թէ Հայն ի՞նչ է և կամ ինչո՞ւ
Պիտի խօսի իր լեզուիկ։—

Ահա՛ սորանք, արդի ժամուս
Մեր արիւնը սրբում են.
Այն պատմական հովիտները
Հայի արեամբ ներկում են։

Մենք անխռով, ամեն ասոնք
Մեր աչերով տեսնում ենք.
Դարձեալ նրանց հաւատարիմ,
Դեռ սրտի սէր ձօնում ենք։

Իսկ ոմանքս ալ կրօնավոխ,
Բողոքական ու Լատին,
Որ իբրև թէ հոգիներնիս
Հանգիստ գտնեն դէպ անդին։

Մի՛թէ որ մեր տաճարները,
Մեզ քաւելու անզո՛ր են,
Որ ինկած ենք, եա չենք քաշում
Օտարների դռներէն։

Օտարք ինչո՞վ են մեզաւոր,
Մենք ենք մեզի ատողը.
Մե՛նք ենք զիրար խորդ խորդ նայող,
Գիրկն օտարին նեռաւողը։

Եկէ՛ք, եղբա՛րք, հաշտի համբոյրք
Տանք միմեանց ճակատերուն.
Պաշտենք միայն մեր սուրբ կրօնք,
Մեր Հայրենիք, Ազգութիւն։

Օտարներուն քաղցրախօսիկ
Լեզուաց մէջը կայ լիք թոյն.
Փախենք նորանց մեզի քանդող
Կեղծ խօսքերէն միշտ հեռուն։

Մի՞թէ հայե՛ր, էլի՞ ճեամք,
Շահագործիք օտարաց,
Մի՞թէ էլի՞ խաբուենք նորանց,
Մեզ մահ շնչող բերանաց։

ՈՐՈՒ ՈՐ ԲԱՐԻՔ ՀԱԿՈՆԴԷՄ ՉԱՐԻՔ

Քողի տակից մի այլ դամբա
Հանդէս եկաւ դէմ Հային,
Որ հայ կրծքից հոսուած արիւնով,
Ցագեցնէ ծարաւին։

Եւ արդէն սա վաղուց օրէ,
Հայի արիւնով կը սնուի,
Նա մեր արեան խիստ սիրահար,
Միշտ խմելու կ'ախորժի։

Ա՜խ հայակեր փուլ պետութեան
Տմարդային վարմունքէն,
Ահա քանի՜ հոն բիւր բիւրներ
Արեանց մէջը լողում են։

Որ իւր գահը Հայի բազկով
Միշտ դարէ դար պահեր է.
Ա՜խ, այն . . . անթիւ բարեաց փոխան
Մեզ ջնջելու ջանում է։

Քանի՜ միլիոն Հայի կեանքեր,
Դորա օգտին զոհուեր է.
Քանի՜ միլիոն Հայի սրտեր,
Սուր ու նիզակ խրուեր է։

Գէթ անգամ մը՝ Հայի արեան
Նա չը դրաւ ո՛չ մի գին.
Գէթ անգամ մը նա չը յիշեց,
Հայոց մեծաց բարիքներն։

Գէթ անգամ մը նա չը խղճաց,
Տարաբախտիկ ժողովրդին,
Որ միշտ անկեղծ, հաւատարիմ
Ծառայեր է իր գահին։

Համբոյրներով մատնող Յուդան.
Լըպիրշ ցինիկ խուժանին,
Հրճուանքներով կանգնած նայում
Հայի փռուած դիակին։

Ո՞ւր է, ո՞ւր է արդարութիւն,
Ո՞ւր է բարեաց բարութիւն,
Որ հայ գլխին հա՛ տեղում է,
Հուսկ, այն ... միշտ միշտ չարութիւն։

Մեր խնկելի եղբա՛ր ցարիւնք,
Մենք թողնում ենք երկնքին,
Այն բնական արդարադատ
Եւ անաչառ Աստուածին։

ՍԱՍՆՈՅ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Ա՜հա՛ Սասնոյ անմատչելի
Այն վեհ, հպարտ լեռներէն,
Մեր հարազատ եղբայրներն,
Խիզախ, խիզախ կռւում են։

Խուժանների դիակներով,
Այդ աշխարհը ծածկում են,
Եւ ապառժոտ լերանց լանջէն,
Արեանց վտակք վիժում են։

Թիւրա ցեղային վոհմակներն,
Լեռապատառ փախչում են.
Հայ պատանեաց գնդակներէն
Թաւալգըլոր ինկնում են։

Կեցցե՛ն Սասնոյ քաջ հերոսներ,
Հայաստանի փրկիչներ.
Նոցա համար նախատանք է,
Մահէն երես դարձուներ։

Ա՜հա՛, Հայե՛ր, արդ տեսնում ենք
Արիւնակից եղբայրներ,
Կեանք չեն խնայում; իւրեանց արեամբ
Լուանում են զայն դաշտեր։

Ատելի է որ այն Հայը,
Իւր եղբօրը չի օգներ.
Սառած սրտով նստած նայում,
Ձէն ի ձեռին չի ելներ ...։

Մի՞թէ դա՞ր ձեալ խոնարհ գլուխ,
Որպէս արձան անշարժուենք.
Դէ՛հ, խաւարտի դարեր մեզնից,
Ելնենք խոպառ անհետենք։

Ազա՛տ տեսնենք, ազա՛տ, եղբա՛ր,
Մեր հայրենեաց լեռները.
Ազա՛տ խօսենք. ազա՛տ Հայկեան
Մեզ նուիրած բարբառը։

Ազա՛տ գըգուենք, ազա՛տ համբոյր.
Տանք սիրասուն վարդերուն . . . .
Ազա՛տ կեանք մեր ազա՛տ տեսնենք,
Սուրբ աշխարհը մեր սիրուն։

ՀԱՅ ՀԱՐՈՒՍՏԸ

Ա՛խ դու, Հա՛յ հարուստ, ստուգապատ սրտով,
Դէն կանգնած միայն նայում ես նայում.
Դա չէ՛ պատիւ քեզ և ոչ քո տոհմին,
Բա՛ւ է խնկարկես այդ մամոնային։

Դեռ 'հա՛ պաշտում ես այդ դեղին պարկին,
Մի թէ չե՞ս տեսնում այն արեան վտակ.
Քո ազգի եղբարց կրծքերէն վազում,
Թշնամեաց սրով հոգիք աւանդում։

Այդ կարմիր հեղեղք չեն օտարների,
Այլ քո հարազատ հէգ եղբայրների.
Մի՛ լիներ Ցուդա, Կայէն և 'ք/վ-ով
Փութա՛ կատարել քո պարտքը խղճիդ։

Արդէն տեսնո՛ւմ ես վիճակը ազգիդ,
Թէ չուզե՛ս փրկել մահառիթ սովից.
Տա՞յ գովեստ ազգդ, ասա՛, քո ինչի՞դ . . .
Սրբի՛ր անունդ հայի մատեանից։

Ա՛խ դու, հայ Յազկերդ, ձիդ գոցիր աչերդ,
Գոցի՛ր այդ լըսող ականջի ակերդ,
Մի՛ գուցէ, չըլլա՛յ խիղճդ քեզ տանջէ,
Պակսին գրպանէդ պաշտած չաստուածներդ։

ՁՕՆ

ԱՆՄԱՀ ՀՈԳԻ

Գ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ

ՍՈՒՐԲ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Օտա՛ր երկնի տակ, օտա՛ր աշխարհում
Ո՛հ, հեռուն, այնտեղ . . . . անծանօթ այրում
Փարուած վեռ սրտով, սուրբ դաղափարիդ,
Զոհուեցար ի սէր պաշտելի ազգիդ։

Նրբին թէլիկը վաղ պոկուեց կեանքիդ,
Կենաց օրիկներդ չը ժպտան դէմքիդ,
Վրադ սեւ վերմակ առնելով լռիկ,
Մըտար ցուրտ ծոցը, ըընծային մայրիդ։

Հանգչի՛ր, ո՛վ անմահ, ազգիդ մեծ գործիչ,

Հանգչի՛ր դու անխոնջ մշակ սուրբ գործիդ,
Առանց սին փառքի, նուիրուած ուխտիդ,
Այն ծանրը խաչը... տարիր փրկիչիդ։

Թէեւ չը հատար փառապանծ փառքիդ,
Եւ քո փայփայած վե՛հ նըպատակիդ,
Այդ յաղթանակը թողուցիր ազգիդ.
Վաղ թէ ուշ դրօշ պիտ՝ պարզէ կրծքիդ։

Եկած եմ ծունր սուրբ Գողգոթայիդ,
Իմ արցունք, հոմբոյր տալու շիրիմիդ.
Առ հանգիստ այդտեղ, ի մէջ տաճարիդ,
Խաղաղ քո յաւէտ յոգնեալ ոսկորիդ։

Արդէն մնում ես ազգիդ հայրենեաց,
Անմահ յիշատակ քո անհուն բարեաց.
Ո՛վ դու խնկելի, ազնիւ պատուական,
Քեզ չէ մոռնալու ազգըդ յաւիտեան։

ՀԱՅԻ (ԵՍ)Ը

Եկէ՛ք հայեր, համախմբուենք,
Կաճառ կազմենք ազգովին.
Սրբենք մեզնից, մեր սրտերից,
(Ե) ու սա (Ս) տառերին։

Տարիք տարերք, հա՛ անցկում են,
Զեզաւ մեզ մի փոփոխանք.
Ինչ որք էին ... ենք էնք նոյնն,
Դեռ եսա՛նքն են մեր պարծանք։

Որքա՛ն կարգանք, որքա՛ն կրթանք,
Բարձր ուսում ըստանանք,
Դարձեալ երբեք չենք մոռանում
Պապենական այդ ժառանգ։

Հա՛յք, դեռ բաւ չէ՞ մեր գլուխին
Տարտարափուին անիծանք,
Որ խլխլում ենք հա՛ ձեռք ձեռքէ,
Դա անաքանդ եսեսանք։

Մեր յետադայ մատաղ սերունդ,
Մինչ ե՞րբ կարդայ նախատանք,
Մի՞թէ մի՞թէ չը կա՛յ մեզի
Նշոյլի չափ պատկառանք։

Բանա՛նք մեր միտք և մեր զկանք,
Թափ տանք մեզնից քանդ, ատանք.
Բա՛ւ է կրենք մենք մեր անձանց
Անհուն անթիւ անարգանք։

Եկէ՛ք, եկէ՛ք հոմանիքով
Տանք զիրարու հոմբոյրանք,
Դորա մէջն է մեր որոնած
Այն փառապանծ սուրբ փրկանք։

ԵՈՒԷՐ

Մեր յայտնի գրչապետ

ԼԷՕԻ ՎԵՀ ՅՈՒԲԵԼԵԱՆԻՆ

Ծնուեցար ազգիդ յառա՛ջ դիմութեան
Լոյսեր շաղ տալու . . . վայրերք հայկական
Ո՛վ գրչի հերոս, ահա՛ քո անուան
Ցօնում է ազգդ քառորդ յոբելեան։

Խնդանք խանդաղանք համայն հայութեան,
Որքն աշխարհի համակ ծարքեբէն,
Հա՛ շարան շարան կուգան ու կուգան
Տալու յարգանքներ զքո մեծութեան։

Որ կեանքիդ ընթիր ցոլքուն օրիկներ,
Տենչավառ սրտով սգազգիդ զոհեր,
Իրօք, իսկապէս այդ վսեմ անձիդ,
Արժէ ծունր զալ համբոյր տալ ճակտիդ։

Ունիս պաշտելի տաղանդ մարդկութեան,
Տարբն արարչի անե՛ղ բնութեան,
Որը մենքս արդէն այդ քո նրբասուն
Բեղմնալիր գրչիդ ենք էնք պարտական։

Որ բռնած ձեռիդ վրձինդ խօսուն,

Միշտ հոսում բերնից լոյս, կեանք, սէր հայուն.
Զայդ բխում սրտիդ խոր խոր էջերէն,
Վարդերն ես քաղում թաւուա թըփերին։

Եւ տիւ ու գիշեր անքուն մշտաբար,
Այդ հսկայ գործէդ չունիս ոչ դադար,
Շարշարում գիւթիչ տողերը անհամար,
Գրչիդ տակ գնում և ձուլում զիրար։

Դու չտեմարան անծայր գիտութեան,
Թող ծնուին քեզ պէսք շատերք հայութեան,
Որ է այն . . . «աշխարհն» անուն հայաստան,
Ծլի ու ծաղկի լինի բուրաստան։

Որ նման լուսնի պէս առատ շաղման,
Մութ հորիզոններ քեզնից լոյս առան,
Փառք, պատիւ, պարծանք բերող ազգութեանդ
Տեսնենք և կրկին քո վեհ յոբելեան։

ՏԱՄՆԱԲԱՆԵԱՅԻ ՄԻ ՏԵՍԱԿԸ

Նախ սիրի՛ր Աստուածդ,
Երկրորդ Ազգդ,
Երրորդ Հայրենիքդ,
Չորրորդ Ծնողքդ.

Հինգերորդ — Կրօնքդ (սրին) միայն թէ ո՛չ լինել կուրօրէն մոլին ու դերին։

Վեցերորդ — Սիրի՛ր ընկերոջդ այնպէս ինչպէս քո անձը։

Եօթերորդ — Եղբօրդ .... ազգօգուտ բարի գործերուն դէմ արգելառիթ էնտիրային չարամիտումներ մի՛ ունենար։

Ութերորդ — Պահէ ու պատուէ հողւոյդ պէս նախնեացդ քեզ ատանդ ձգուած նուիրական հնութիւնները .... որովհետև դրանցով ես պարծենում և դրանցով ալ զքեզ ծանօթացընում ազգերին թէ՝ դու ո՛վ ես։

Իններորդ — Զը թողնել բո խնկելի և պաշտելի նախնիքների սրբազան հանգուտարանները որ թշնամիք ոտնահարեն։

Տասներորդ — Զանա՛ որ բոլամարտ և հերոսական անունով մեռնիս, պարծանք քո տոհմին, քո ազգին և հայրենիքին։

Հայ ազգ, ահա՛ քո ամենատարրական, ամենաանհրաժեշտ և ամենասրբազան պարտակա-

նութիւններդ (սոքա են) առանց որանց հաւատա որ, բոլորովին դրօշի մի արժէքն ալ պիտի չունենաս, ո՛չ հայրենիքիդ և ո՛չ ազգիդ առջևը, վերջապէս .... բնաւ մի զլանար ջանքդ ու կեանքդ տալ այն ազգին, այն հայրենիքին որ դու ներանցմէ ես ստացած այդ քո ամբողջութիւնդ ....։

ՀԱՅԻ ԱՂԵՐՍԸ

Երկինք և երկիր
Հայեացքիդ յառած,
Եւ ամեն ինչ բանք
Կամքիցդ է կախուած,
Արդեօք չե՞ս տեսնում
Հայերիս արկած,
Մեր հոգին խորված,
Մեր սիրան է պատկած։

Մի՛ տես եղակի,
Կարմիր «բորենին»
Դեռ ախորժանքով
Ուտում է հային.
Ո՛հ, արդեօք մի՞թէ
Անհուն երկնային,

Դեռ չը լեցուեցա՞ւ
Կամքդ ասուածային։

Ուրիշին աչքերդ
Լայն լայն բաց անում,
Բայց երբ որ մեզի
Հա՛, միշտ մրափում,
Ասա՛ այդ մոքինդ
Ինչի՞ վերածել,
Կարծես որ դու չես
Հային ստեղծել։

Արդէն գիտում ես
Վաղուց մեր անկում,
Օտարաց լըծի
Տակն ենք ընում.
Ա՛խ, ե՞րբ պիտ՝ լինի
Մեզ քո սփոփում,
Տալ կրկին եւս,
Անգամմ՝ալ կանգնում...։

Լսի՛ր մեր ձայնը,
Ո՛վ տէր համայնից,
Փրկի՛ր մեզ փրկի՛ր
Սա սեւ օրերից.
Մեզնից դու ցաւած,
Զենք գիտեր ինչից,
Այլ հերիք վրէժ
Լուծես հէ՛դ հայից։

Հուսկ քո ստեղծեալ,
Երկինք և երկիր,
Հայերիս հաստատ
Հընոց մը ըրիր,
Ընկեր ենք անծայր
Տանջանքի ծովում,
Եւ արդէն ահա՛
Թեղ ենք ազերսում։

ԱՆՈՒՐՋՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ

Սիրա իմ անուշ հանգիստ կայիր,
Խարխուլ խաւար այդ արկը...
Այլ հերի՛ք է, դու ալ միշտ միշտ
Զարնես կրծքիս տաղդակը։

Վշտահարեալ ես այս կեանքից,
Թռչել կուզեմ դէպ անդին,
Բայց աւա՛ղ որ անծանօթ եմ
Այն աշխարհի իսկանքին։

Արդեօք կա՞մը մեզերի մէջ
Հոգիների դրախտ մը...
Գէթ դա անծայր եթերիցը,
Լուր մը բերէր անհատ մը։

Ա՜խ, թէ լինէր արծիւի նման
Սաւառնէի բիլ երկներ,
Զօր աչերովս տեսանէի
Այն բնական հիմունքներ։

Իսկոյն եւեթ կը փութայի
Մեկնել այնտեղ . . . առ տէրը,
Ընտրելով յաւէտ ինձ վայր,
Կը թողնէի զաշխարհը։

Ցուր ինձ հանգիստ խաղաղ ժամ մը,
Անդորը կացի՛ր սիրտ սիրուն,
Բա՛ւ է դպչիս մատիկներովդ,
Կրծքիս նրբին թելերուն։

ՀԱՅՐԻԿԻ ՄԱՀԻ ՍՈՒԳԸ

Լերինք հայրենեաց մշուշ են պատել,
Դաշտ, բլուր, ձորերը սգաւոր զառել,
Վազում բիբերից ծոր ծոր արցունքներ,
Ո՞ւր ես ո՜վ հայրիկ, թուես վշտանքներ։

Երկնակամարից վառ աստղ մը չիջար,
Ապաքաղդ . . . աղգդ ըրիր վշտահար,
Ըրիր սգաւոր մատուռք և տաճարք,
Ըրիր խկապես մեր արեան աշխարհ։

Որ երբեմն էիր փարոս հայկական,
Նրբին յոլքերովդ դէպ քեզ գրաւող
Լուսոյ ճաճանչներդ փռում մեր վրան,
Մեզ առաջնորդում ուղին իրական։

Կար ծով սրտումդ պէս պէս յոյլ իղձեր,
Նրբահիւս մտքիցդ ինչեր չէր անցներ . . .
Ա՜խ, ինչ արած որ այն չար հրեշտակ,
Կուրանար աչերք, որ քեզ չը տեսներ։

Աղգիդ վշտերով պատուած հարաբար,
Մխում էր այրուած սիրտդ անդադար,
Վերջնաշնչիդ մէջ եղար ազգարար,
Մուրճիդ տակ դնել և ձուլել զիրար։

Հանգիստ աճիւնիդ, ո՜վ Արբայ Արծիւ,
Որ էիր միակ Թորգոմայ տընի,
Անքուն հսկողը քո արծուիկների,
Թագն ու պարծանք հայոց աշխարհի։

Դու տեսնում էիր, միշտ հեռուն այնտեղ,
Որ ձագուկներդ թառմառ են լինում,
Սլանում, սուրում, սաւառնում, յուզում
Թէ ինչպէս նոքա հեծում ու հիւծում։

Արդ թողիր զամենք ափըն գիշատեաց,
Սոզունք ու ճըճունք ոտքի են կանգնած,
Որ ահա՛ նրանք ուզում այնտեղից,
Իսպառ ձագուկներդ սրբել իւր բընից։

Գիտենք չես թողնիր մեզ անմխիթար,
Մինչեւ որ ծագի արեգակն արդար,
Վրայ սեգ ազգիդ և հայրենիքիդ
Պիտի սաւառնէ միշտ անմահ հոգիդ։

ԱԶԱՏ ՈՐԴԻՔ

Սասունի ժայռոտ լեռների ազատ,
Դարերու պարծանք, սերունդ հարազատ,
Պողպատեայ սրերք ձեռներուց մէջ ալ,
Ցանդուգն արձակ նետում դէպ առալ։

Փոթորկի բովից բիւր անգամ յուղուած,
Բայց դարձեալ բնաւ չեն իսկ վհատուած,
Են նոքա միայն պարծանք հայրենեաց,
Պարծանք Հայ ազգի սերունդ դիւցազնեաց։

Նախակարապետ, մարտչոգ փրկութեան,
Սաւառնող օդի մէջ արծուի նման,
Սլանում ընդ դէմ դարեւոր դաժան,
Խմել արիւնը ոսոխ քրդութեան։

Միշտ կանգնած պաշտպան ի՛ր սուրբ հայրենեաց,
Շամիրում են նոցա ... անթիւ հազարաց,
Մոխրակուտելով դիակ թշնամեաց,
Առնում վրէժներ նախնի պապերաց։

Սրերով անհաշտ սլանում դէպ դաշտ,
Հուսկ ազդած սարսափ սրտում քրտերաց,
Հոգէառ դորանց եղած հրրեշտակ
Զգեստնում համակ ալ և ահեակ։

Սասնոյ անառիկ սարերի ազատ,
Դարերու պարծանք սերունդ հարազատ,
Կորիւն առինծի պէս կուռոց հսկայք,
Օ՛ն կեցցեն յաւէտ անձնուէր տիտայք։

ԶՕՆ

ԱՆՄԱՀ ԴԻՒՑԱԶՆԱՊԵՏ

ԳԷՈՐԳ ԶԱՎՈՒՇԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Խորին լռութիւն հայկեան աշխարհին,
Համակ խորապէս ցնցուեցաւ հուժկին,
Ընկար վառ մարտի դաշտում արնալիր,
Վշտատանջ ազգիդ վիշտն աւելցուցիր։

Խլուեցար մեզնից պաշտիչ պատուական
Անհուն անձնուէր պարծանք հայութեան.
Ով դո՛ւ եղակի աննման հերոս,
Որ էիր մեզ միշտ լուսատու փարոս։

Դու էիր միակ մոտիկից եղբայրց...
Վէրքերը դիտում դարմանում նրանց,
Եւ կեանք ներշնչում սիրում համայնց,
Միշտ այս էր եղած հոգդ վեհ սրտանց։

Ճակտելով ընդդէմ լպիրշ քրդութեան,
Հա՛ միշտ առնելով պսակ յաղթութեան,
Եւ երակներդդ արիւն իսկական,
Ծոր ծոր վազցուցիր հայրենեաց փրկման։

Պիտ՝ գրուի անունդ անյաղթ ախոյեան,
Ոսկէ տառերով էջեր պատմութեան,
Որ դարէ ի դար նշան անմոռաց,
Քեզանով պարծի սերունդ հայկազեան։

Նիրհի՛ր ո՛վ առիւծ՝ մայրական գրկում,
Նիրհի՛ր դալարուն Տարօնի հովտում,
Քաջ Պապիկներիդ շիրմերի կողքում
Բազմատանջ ոսկերքդ առնեն հանգստում։

Եւ արդէն տուած քո մեզ պատուիրման,
Մեր կեանքը դրած սուրբ գործին լուծման,
Դադար պիտ՝ չառնենք մինչեւ իրապէս
Չի պարզենք կրծքիդ դրօշն ազատման։

ԶՕՆ

ԱՆՄԱՀ ԲԱՆԱՍՏԵՂԾ

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Լաւեց քնարդ ո՛վ անյաղթ պօէտ,
Այլ հիմի հանգիստ առնում ես յաւէտ,
Շուրջդ լռակեաց սառն գետնի տակ,
Քնում այդ փոսում անդորը միակ։

Որ էիր շարժում գրիչդ սահուն,
Կեանքդ նուիրած հէգ եղբարց սիրուն,
Վանելու տիրող խաւարը դաժան։
Ուղին ցոյց տալու յառաջդիմութեան։

Միշտ իղձդ էր տեսնել դարերով դիզուած,
Հայի վրայից խաւարք վերացուած,
Եւ եռուն ոգւով ասպարէզ իջեր,
Հա՛, ջանում էիր բուժելու վէրքեր։

Փայլապանծ գրչէդ գոհարը հոսում էր,
Շարարում էիր անգին ակինթներ
Որ վէրքոտ սրտիդ խորքից էր պոռկում,
Մեր այրուած հոգիք զեղում, դարմանում։

Ո՛հ, դու ա՛լ չկաս, բայց քո ճօնը նիր,
Մեղրալիր բերնիցդ բըխած կենսալիր,

Հանճարքդ պէս պէս կերտած տաղանդէդ,
Թողիր քո ազգիդ զայնք նուէր յաւէտ։

Եւ հանգիստ գիրկն անյագ բնութեան,
Դրուեցար ի հող և ի գերեզման,
Բայց դարէ ի դար ազգդ հայկազեան,
Պիտ՝ յիշէ ընդ միշտ անուանդ վեհական։

ՀԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ

ԴԷՊ ԲԱՐՁՐԵԼՈՅՆ

Այս ի՞նչ բնական
Բանքդ են էական
Որ համայն Հայքս
Մէջ ցաւի ցասման,
Հարց տուր ո՛վ դու մեղ,
Մի աստուածաբար,
Ո՞ւր է քո անկեղծ
Կըշիռդ արդար։

Ընդէ՞ր դու այսպէս
Խղճուկ Հայաստա՛ն,
Պիտ՝ ընես անվերջ
Կրքիդ կայարան,
Ա՛խ, առատ առատ

Արիւն արցունքներ,
Դեռ կ՝ուզե՞ս վազեն
Հայի բիբերէն։

Միթէ չե՞ս տեսնում,
Միթէ չե՞ս լըսում,
Ո՛վ անգութ պաշտուած,
Հառաչը հայուն
Որ դարեր անվերջ
Լռում ու ճնչում
Միթէ դու խսպառ
Կ՝ուզե՞ս մեր կորչում։

Յորդառատ արեան
Դեռակներ հեղում,
Մի՞թէ քո հրճուանք
Դորա մէջ գտնում,
Միթէ մեռա՞ծ է
Խիղճը քո սրտում
Որ հայի արնով
Միշտ գահդ ես ներկում։

Յանցանքդ անհուն,
Անծայր ովկիան,
Բայց, աւա՛ղ չունիս
վրադ գերիշխան,
Որ քարշ տար զքեզ
Դէպի դատարան,

Թէ ինչո՞ւ հայի,
Կարօտն ես արեան։

Այս ի՛նչ բնական,
Բանքդ աստուածական,
Որ մատնած մեզի
Արեան, աւերման.
Ասա՛, արդ քեզի
Ցանք ի՞նչ ածական,
Որ միշտ եղած ես
Հայի դաւաճան։

Մարտի շեփորներ
Այդ տեղդ ալ հնչէր,
Ընէր սրախող,
Ընկեր զիւր ընկեր.
Թող լսուէր ահեղ,
Ողբանքի ձայներ,
Թող հոտ ալ արեան
Հեղէր դեռակներ։

Եւ թափուէր երկնից
Աստղք, լուսին, արև.
Թող երկնի մէջ ալ
Խաւարը տիրէր,
Արիւն, արհաւիրք
Շուրջդ շղարշուէր,
Ա՛խ, նոյն նման օրքեր
Քեզ ալ վիճակուէր։

«Դահիճների պետ...»

Ո՞վ քեզ ընտրեց,
Անարդար իշխող,
Բռնի դատաւոր,
Բռնութեամբ տիրող,
Որ միշտ յոխորտում,
Անհուն բարձունքէն,
Որի՞ց քեզ մեաց...
Իջի՛ր այդ դահէն։

ԱՐՅՈՒՆՔՆԵՐ

Ա՛խ Հայաստան, ընդէ՞ր լինիս
Բորիների որջարան.
Ինչո՞ւ այսպէս միշտ եղած ես
Հէգ հայերիս սդարան։

Ա՛խ Հայաստան, մի՛թէ այսպէս
Միշտ պիտ՝ մնաս վշտարան,
Եւ կամ մի՞թէ անվերջ հային,
Դու պիտ՝ լինիս տանջարան։

Ա՛խ Հայաստան, դաշտ ու ձորդ
Հայ արիւնով ներկուան,

Հովիտներդ լիք որբերով,
Անհայր, անմայր, անպաշտպան։

Զուտիս ոչ մի կարեկցակից
Հէգ որդւոցդ սիրտերը,
Խնամատար իւր ձեռներով,
Սրբէր նրանց արցունքներ։

Խտանում են օր ըստ օրէ
Որբիկների հոծ շարքեր,
Անպատսպար և անտիրուկ
Մնացեր են դռնիկներ։

Ոտաբոպկիկ մէջ ցնցոտեաց,
Իւրեանց մերկեալ ձեռքուկներ,
Կարկառում են ճկճկուելով,
Աղերսում են հայցանքներ։

Բայց թէ ո՞ւր են ազնուասիրտ,
Ողորմասէր անձինքներ,
Որք ծնուած են միայն իրանց,
Լեցուցանելու կոկորդներ։

Ա՜խ Հայաստան, արդէն վաղուց
Անտանելի վիճակ մեր,
Աչքերը խփած և չեն տեսնում
Բաղդերով լի մեծ աղդեր։

ՀԱՅ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ

Գոռ շեփորի աղդանշան
Երբ տրւում է քաջերիդ,
Հրրաշանթեաց կայծակները,
Մէջն ընկնում է սրտերիդ։

Եւ մշտավառ կանգնած խրոխտ,
Մարտչում ընդդէմ բռնութեան,
Մղում խիզախ, մինչ վերջն յաղթանք,
Գնում արնով նոր նոր կեանք։

Անծայրածիր աղնիւ սերունդ,
Խրոխտա սօս տիպարներ,
Ձեր վեհ անուն անմահութեան,
Պիտ՝ անկուին կոթողներ։

Յոյլափթիթ ծաղկունքներով
Պիտ՝ զարդարուին ձեր ճակտեր,
Հուսկ շիրմերաց վրայ դափնէ,
Պիտի դրուին պլսակներ։

Պիտ՝ վերանան, պիտ՝ հեռանան,
Ժամանակներ բռնահար...
Եւ ձեր վոթած սուրբ արիւնով
Պիտի փրկուի հայ աշխարհ։

ՄԵՐ ՍԵՒ ՕՐԵՐԸ

Հի՞մի էլ եղբա՛ր, մէկ մէկի ատենք,
Իմը և քուկը զիրարմէ զատենք,
Ազգ ու հայրենիք չիք կրքեաց զոհենք,
Մատնիչ, դաւաճան լինենք ու քանդենք։

Եկէ՛ք, ա՛լ ցըրենք մեզ շրջապատող
Խաւարը բարդ բարդ շարան դարերով,
Տանք թիկունք թիկնի որպէս հսկայ սարը,
Պատենք մեզ սիրոյ ամրակուռ պատով։

Դառնագին օրեր թող մեզնից վերնան,
Սգալի ժամեր խպառ չըվանան.
Արեւի արփին խաւարի փոխան
Թող փոխարինէ գարուն բուրաստան։

Այլ այսուհետև կենսափայլ երկինք
Իւր դեղատիպով ժպտայ մեր վրան.
Քէն, ատեցութիւն մեզնից հեռանան,
Մեր սիրտք ու հոգիք սիրօք միանան։

Տանք զիրարց համբոյր՝ նշան սերտ կապման
Բըզենք շապիկը խպառ դերութեան,
Մեր մայր կենսատու եթեմ սրբասուն,
Ալ բա՛ւ է մեզի լինի ճգնարան . . . ։

Նա է մեր սիրտը նա է մեր հոգին,

Տանք մեր համբոյրներ անհուն ջերմագին,
Վեհ ոգւով փարուենք, ձիգ կառչենք ներան,
Նա է մեր կեանքի տաճարն հանդրուան։

Եւ հուսկ հայրենեաց երբեք դաւաճան,
Զըլլանք Մերուժան, Դաւիթ և Վահան
Եւ կամ մեր եղբարց թափած ծով արիւնք,
Մոռանանք, ու բանանք քան քուրդը դաժան։

ՈՎ Է ՄԵՂԱՒՈՐ

Օտարք մեր անձին է՞ր պիտ՝ տիրանան,
Խմեն մեր արիւնք ու միշտ քրքըշան.
Հա՛, մի՞թէ որ են նրանք յանցաւոր,
Ո՛չ, բնաւ իսկի՝ մենքս ենք մեղաւոր։

Որը դարերով եղած մենք զանոնց,
Կամեաց ցանկութեան համր նոխազներ,
Որք տաքուկ տաքուկ մեր արիւնք լափում,
Մեր վազուած արիւնով խնճոյքներ սարքում։

Իսկ մենքս արդէն ներկայ սերունդներս
Ի սրտէ ուխտած՝ իջերք տապարէզ,
Մինս հա՛ միւսին խոր փոս ենք փորում,
Ոխերով լեցուած զէնքեր ենք չափում։

Որ ինչո՞վ գովենք մեր անձը աղբե՛ր,
Օձերով լիք լիք ժանգոտուած սրտերը,
Որ միշտ մեր վրայ նախանձն է տիրում,
Զարակամ զիրարց գետնահար անում։

Մինչ ե՞րբ շարունակ յետադայ սերունդ,
Մեւ սեւ տառերը շարէ մեր ճակտում.
Հա՛ թափէ թափէ անէծք մեր գլխուն
Եւ չը թողնել մեզ հանգիստ խոր քնում։

Ո՛վ սուրբ հայրենիք՝ անգին Հայաստան,
Կրքերով տկրած՝ ընկած ենք վիժման.
Ա՜հա՛ տես նեղկայ դարուդ հայութեան
Որ մենքս ենք զքեզ մատնած անբուժման։

Միշտ ալ այսպէս է գործը հայութեան,
Կարօտն ենք քաշում զիրարու արեան.
Օտարն իր սուրը մեր կրծքին խրում,
Հուսկ մենքս ալ արդէն զիրար բըզքտում։

Ո՞Ի Ր Է

Ա՜խ, չեղաւ օր մը երգէի ազգիս,
Փրկագանձ, անդորը ու ազատ կեանքը.
Ա՜խ, չեղաւ դէթ մի՛ տեսնէի նրա
Ծըփծըփար դէմքին ճոխ ճոխ ժպտանքը։

Որ այլ եւ անհետ՝ բռնաստոսկ օրեր,
Վերնար նրանից դժընդակ դարեր,
Եւ սուրբ պատիւը ընտանեաց յարկին,
Լինէր նա տէրը իր առագաստին։

Ա՜խ, թէ տեսնէի որ կենաց ազատ,
Եղեր է կայան՝ աշխարհը մերին,
Ազնակոլ սրտեաց վէրքոտ ծալքերէն
Լինէր դադարուած հառաչը հային։

Եւ ալ կաշկանդուած՝ չըլլար այլայլեաց,
Ազատ թռիչքով սլանար առաջ,
Զուարթ մայիսեան պէս բացուած վարդեաց,
Շարժէր նախանձն համայն ազգերաց։

Տեսնէի հային ուսման տաճարում,
Ուսումն աւարտած՝ լեցուած գիտութեամբ,
Եւ լինէր ծաղկած՝ լքուած մեր աշխարհ,
Որ երբեմն ինչպէս եղած ոսկէ դար։

Հուսկ այսուհետեւ չը տեսնեմ հային

Որ եղած լինի ծառայ օտարին.
Ա՜խ, բնագեղուն մէջ իւր հայրենեաց,
Դէթ տեսնեմ նրան ժպտանքը դէմքին,
Թուղպ օրիկները խպառ անհետուած,
Շարաւոտ սրտի էջերը բուժուած։

ԶՕՆ

ԱՌ ՀԵՐՈՍ ՄՈՒՐԱՏԻՆ

(Տիար Համբարձում Պօյաճեան)

Մուրթեան ոսոը բռնած քո ձեռին,
Յաղթական քայլով առաջ ընթանում,
Սէր ես ներշնչում և սէր փրկութեան
Ըստ ասլու նոր կեանք խղճուկ հայութեան։

Դու տեսնում լքուած աշխարհը վերին,
Սա մեր դարերով ծալք ծալք վշտերին,
Գտնել սպեղան խոր մեր խոցերին,
Ջանում ես բուժել շաւրոտ վէրքերին։

Օ՜ն, տանում լուծդ նկուն ու ճկուն,
Միշտ հեզ ու խոնարհ հայրենեաց սիրուն,

Որ արդէն ուսած մեծ վարդապետէդ,
Սիրաղեղ սրտով յանձնուած ինքնէդ։

Միշտ եղած անխոնջ անձնուէր էակ,
Անհուն չարաչանջ ազգիդ հարազատ,
Լուսատու լապտեր որպէս արուսեակ,
Վարդ շրթնէդ շանթեր արձակում ցոլատ։

Լոյս սփռում, լոյս անշիջելի,
Գանձ մը անսպառ անգնահատելի
Զայդ բնաշնորհդ ազգիդ հայութեան,
Ի սրտէ ընդ միշտ կուտաս լի ու լի։

Քայլերդ տենդոտ առնում ես ազատ,
Եռուն ու զեռուն գործում ես հատատ։
Թէև կան ընդդէմ ձայներ պժգալի,
Քուկն է յաղթութեան դափնին պանծալի։

ԱՅՆ ԻՇԽՈՂԻՆ

Ես իմ ազգիս վիշտն հառաչով,
Կուտամ անհուն աշխարհին,
Որ աշխարհն ալ ցոյց տայ մատով
Այն . . . վերեւի իշխողին։

Որ նա վերից նայէր դէպ վայր,
Իւր արածից ամչկէր,
Ա՜խ, նա հային ինչո՞ւ այսպէս
Էլ վերքերով ստեղծէր։

ԵՐԲԵՔ

Երբեք չի յուսանք աշխարհէն վատթար,
Օրեր կը պակսին՝ օրեր անարցունք,
Այս է բնական օրէնք բնութեան,
Եւ մինչ մարդկային կեանքի գոհութեան։

Խողել խոշտանգել եղբայրն իր եղբօր,
Ծիտ տալ թռչկըտել դիակի բոլոր,
Ահա՛ մարդկային բնազդն ի բնէն,
Որը մնացած ժառանգ Կայէնէն։

ԴԷՊԻ ԱՅՆՏԵՂ

Հրաշակերտ մայր եղեմի,
Բացուէր դռներ դարնաւէտ
Բացուէր վարդեաց կոկոնները,
Հիւր ընկալում սոխակ զերդ։

Հրաւիրուած այլ թռչնեակներ,
Եւ «ծիծեռնակ պատմալիր»,
Որ (նա) սիրոյ խանդով լեցուած
Թռչում դէպ անդ ցնծալիր։

Զմրան սաստիկ փոթորիկներ
Ցրիւ տուած իւր բնիկ,
Գնում կրկին վերշինելու
Իր հայրենի խրճիթիկ։

Եւ սրտաբաբ պինդ կառչելու
Բընիկ տընին աւրաւեր,
Սուրբ, հարազատ հողին, քարին
Տալու ջերմ, լի համբոյրներ։

Ահա՛ ծագէր գարնան արև,
Ալ չէ մնում «ծիծեռնին»,
Գեղգեղալիր ճողրանքներով
Դիմում գիրկն հեգ մայրին։

ՀԱՅ ԱԶԳ

Թէեւ օտարք քեզ սիրում են
Բայց դու երբեք մի՛ հաւատար,
Որովհետև այդ չոյանքն է
Կեղծ ու պատիր, անկատար։

Նոքա միշտ էլ սերտ, սրտաբար
Շռայլում են ժպտանքներ,
Եւ ճակատիդ հա՛ քաղելու
Կեղծիքով լի համբոյրներ։

Որ մինչեւ իրդ նենգ մտային
Զիք խորհուրդքն իրակնած,
Ճիգ են թափում հուսկ տեսնելու
Սեւ իղձերքն կատարուած։

Բայց դու. հա՛յ ազգ, արթուն կացիր.
Զէ մրափի ժամանակ...
Նաւիդ դեկը դու հմտարար
Բռնիր ձեռքումդ ամուրակ։

Զգոյշ եղիր կուլ չգնաս
Փրփրագոռ ալեաց մէջ.
Ցանկարծ չը տաս քո դարեւոր
Վեհ գոյն թեանդ խպառ վերջ։

ԵՂԲԱՅՐ

Երբեք եղբայր, քեզ չեմ ատեր,
Դու մի՛ լինիր դաւաճան.
Քո ճաճանճատ սուրբ գործերովդ
Փայլեր ատող մը եղական։

Բայց որ լինիս վիշապ ու գայլ,
Ի՞նչպէս չասեմ չիք գազան
Որ քո եղբօր կեանքը խլում
Դնում նրան դերեզմանն։

Եւ երբ սիրես քո հայրենին
Եւ քո եղբայրդ հոգեբար,
Անհուն սէրս քեզ նուիրած
Պիտի լինիմ յարաբար։

Իսկ թէ լինիս անգովքաբեր
Անպատշաւիր քայլերում,
Կեռ դաշունը համակ խրուած
Պիտի տեսնես քո կրծքում։

ԱՐԵՒԸ ԵՐԿՆԻ

Լուսատու երկնի նրբապատ կրծքից
Ծագում է արփին շաղ տալով դէպ վար
Ճոխ ճաճանչներով փռւում աշ ու ձախ
Հապա մեր աշխարհն ինչու է խաւար։

Զորք և բլուրք, դաշտ ու հովիտներ
Անփարատ թանձր մառախուղ պատեր
Կեանքի օրօրան այս հին աշխարհը
Զեղաւ որ պայծառ արև մը տեսնէր։

Որ միշտ ծառացած բարդ բարդ դոռ ամպեր
Գորշ միժն է պատած եթերն այդ երկրի,
Կարծես կայանն է բնութեան կրքի
Եղած ենթակայ անգութ տարերքի։

ՈՐԴԻՔԸ ԱՒԵՐ ԵՐԿՐԻ

Այդ աւեր երկրի դժբաղդ զաւակներ
Աւեր հայրենեաց հիւծուած էակներ,
Այս ի՞նչ կեանք, արև, այս ի՞նչ դառնութիւն
Որ տիրեր զձեզ անզուսպ բռնութիւն։

Ո՞վ ձեզ գլորին գիրկը սև բախտին
Դրին ձեր կեանքը ի տակ իրց թրին,
Որ ահա խրոխտ կանգնած վեհութեամբ
Նայում են ձեր խոր վիրաց հեգնութեամբ։

Եւ արդէն նրանք տիրած ձեր ինչքին
Բռնած մերկ սրերը կանգնած ձեր դլխին
Դուք որպէս դառներ եղած խոնարհ, հեզ,
Վադր ու գայլ դառած բզկում են զձեզ։

Ո՜հ, լսում արդէն ձեր խոլ հառաչներ
Սուր ու սովի օրհասն է տիրեր,
Ձեր պատմավայրերը արեան ծով դառեր
Ծաղրում ձեր վիշտն համայն տիեզեր։

ՄՈՄԻՆ ՓԱՐԱՆ

1899

Մեր պապերը դարեր առաջ թողուցին
Կուռք ու մեհեան. կրակ տուին՝ աղդային
Մեր պատմութեանց. որ չը մնայ յիշատակ
Հին օրերէ, քառաթեւիդ շուրին տակ։

Խաչիդ յառած ա՛լ աչքերնիս՝ շարունակ.
Մենք թողուցինք սուր, հրացան ու գնտակ.
Ու անկորով ազգ մը եղած՝ այն օրէն
Լալ ու ողբալ գիտցանք միայն մեզ օրէն։

Դժոխքիդ վախ, Արքայութիւն երկնային
Գրաւեցին համակ ուշը մեր ցեղին։
Գալու փառքով, Գալու վախով՝ միտք ու խելք
Յափշտակուած, մոռցանք ներկան ու վայելք։

Մեր սեւազգեստ կղերները մեզ ըսին.
«Մէկ երեսնուդ երբոր զարնեն. դուք անդին
Դարձէք անիսօս, որ միւսին ալ՝ պերճօրէն,
Փրկչական նոյն շա՛ի շրջա՛իը չնորհեն»։

«Գայլին առջեւ՝ դուք ոչխարը եղի՛ք միշտ,
Եւ կամ՝ կատուին եղի՛ք մուկը ճիշդ ու ճիշդ.
Հոգ չէ ձեզի թո՛ղ բզկտեն. հերիք որ
Ժառանգորդն էք արքայութեան երկնաւոր»։

Ըսին անոնք. ու մենք յօժար սուր երկաթ
Դէն նետեցինք. առինք ոսկի ու արծաթ
Ու չինեցինք սրկիհ, քըշոց. խաչ, բուրվառ
Ծնծղաներով քեզ օրհնելու դարէ դար։

Քեզմէ ի զատ -յոյն թէ լատին- ջերմօրէն,
Միւրիտներդ ալ պաշտուեցան մեր ցեղէն.

Դուրս չը մնաց ոչ սուրբ Գէորգ, ոչ Մինաս
Ոչ սուրբ Սարգիս, ոչ Կոմիտաս, Բառնաբաս։
Ցաճար կանգնել, վանքեր շինել հոյակապ.
Ա՛ս եղաւ մեր օրուան հարցը հրատապ.
«Հոգ չէ փլի ազգին տունը փառայեղ.
Եկեղեցի մենք կը կանգնենք անոր տեղ»։
Ըսինք, «մեզի պէտք չէ իշխան թագաւոր.
Փրկի՛չն է մեր թագաւորը երկնաւոր»։
Շուքին ի տես մենք՝ պատառը պատրաստի
Կորսնցուցինք երազներով անոտի։

* * *

Հիմակ եկո՛ւր հաշիւ տեսնենք՝ ո՛վ փրկիչ,
Փրկիչ մը որ փրկել չիյտես. այլ քանդիչ
Թուրքին, քուրդին թիկունք կըլլաս որ սրբեն
Հայ անունը երկրագունդիս երեսէն։

Քեզի ըլլան եկեղեցի, վանք, խորան,
Միայն թէ սա վառուած մոմին տաս փարան.
Խունկ ու կնդրուկ, ծնծղայ քըշոց, միշտ քեզի,
Քեզի ըլլան. մոմին փարան տո՛ւր մեզի։

Պեռութիւններ կը կազմուին, դրամով՝
Զոր մխեցինք առջիդ մոմեր վառելով։
Մեզի պէտք է այդ դրամը. տո՛ւր կըսեմ
Տո՛ւր՝ կը ճըլամ գերեզմանիս սա սեմէն։

Զե՞ս տար ամբողջ. գիտեմ որ դուն չես Բաւոր.
Ճարտարուորէ, հայտէ՛ նայիմ, կէ՛սը տուր.
Կէսին կէսն ալ բաւ է մեզի. տո՛ւր միայն.
Ահա քեզի քօնքորտա մը եղական։

Քսան-հինգով մաքրէ՛ հաշիւդ հայուն հետ.
Գիտես որ սա պահանջ մը չէ անհեթեթ։
Բայց կը սոսկամ լռութենէդ . . . հա՛, ասա՛նկ
Ձես քաշուիր դու հռչակուելէ մե՛ծ անանկ։

Յ. Զաքրբեան

ԻՂՁԸ

1898

Սա երկինքին տխրունակ
Մելանոյշ ասպն ըլլայի.
Ու արտասուաց յորդ վտակ
Աւերց վրայ ցանէի։

Կարմիր վրէժն ըլլայի
Մեր զոհերուն անհամար.
Ոտքիս ներքեւ բռէի
Ա՛խ, գազանը, չանթահար։

Կամ նոր Տիգրան մ՚ըլլայի.
Աժգահակը սա վատթար
Կտոր կտոր ընէի,
Ու յիշուէի դարէ դար։

Անյաղթ Մովսէսն ըլլայի,
Արեան ծովէն փոթորկուն
Դէպ Արարատ չուէի,
Հէգ ցեղիս հետ անենկուն։

Կրակ ու բոցն ըլլայի
Մասեաց սարին չանթարձակ.
Դոռ որոտմամբ փշրէի
Փարաւոնին գահն ու թագ։

Կամ Աստուծոյ անվախճան
Բունին գեղթափն ըլլայի.
Որ արթննար մի անգամ,
Դիտել վերքերն հայրենի։

Սուր աւաչը ըլլայի
Լալերգի մ՚ը գառնացած
Ու երեսին գոռայի . . .
«Գթա՛ ալ ես, ո՛վ Աստուած»։

Տ. Ճգնաւորեան

ՇԱԲԷ

ՍԱՍՆՈՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՆ

Շաբէ՛ն եմ ես. աղջի՛կը վե՛հ ժայռերու՝
Որ դարերո՛ւ չանթ ու կայծա՛կ սչտագոռ
Որոտնե՛ը հեգնեցին։

* * *

Կ'երգնո՛ւմ ահա.
Կաթն սաինքի՛ս, որսի հատա՛ը զաւակիս
Անո՛ւշ ըլլայ. իսկ արի՛ւնը եռ ու զեռ
Երակներուս, պէտք է ձօնուի՛ն իմ ցեղին՝
Ազատութեա՛ն նուիրական դրօշին։

Շաբէ՛ն եմ ես. աղջիկն հպա՛ր ժայռերու
Որ դարերու չանթ ու կայծա՛կ մշտագոռ
Որոտնե՛ը հեգնեցին։

Ես ընկրկի՛մ...
Չէ՛, բնա՛ւ չէ։ Մատաղ կեանքիս օղա՛կը
Կարել կարճել. ա՛յս է պարտքը սրբազան.
Որ մահուանը դրուագներո՛վ՝ հայ կնոջ՝
Դիւցազնութեան օրինա՛կ տամ դարէ դար։

Շաբէ՛ն եմ ես. Սասնոյ լերանց արծուհին,
Ուր սորված եմ թռիլ ազա՛տ ու ազա՛տ,
Գրգօիս հե՛տ պաշտելի։

Ես խնայե՛մ...
Չէ՛, բնա՛ւ չէ։ Ազատութեան սուրբ սեղան՝
Նոխազ մը՝ ալ կ'ուզէ ինձմէ անմեղուկ։
Թուրքը ապրելո՛ւն՝ հա՛յ թոռ մեռնի. հա՛յ անուամբ
Թող դայ գրկե՛լ գերեզմանը ինձի հետ։

Ես արծուհի՛ն, նա արծուի՛կը՝ գրկիս մէջ
Մայր ու զաւակ պէտք է ճախրե՛նք դէպի մահ.
Ա՛յս է պարտքը Շաբէին։

Տեսէ՛ք, տեսէ՛ք.
Գրոհ տալով, ահա կուգա՛յ ժանտաժուտ
Վատ խուժա՛նը արիւնարբու, փրփրած.
Նա չը՛ ճանչնար ո՛չ սրբութիւն, ո՛չ պատիւ.
Խլե՛լ կ'ուզէ՝ ինչ որ իմ չէ, անպատկառ։

Սասնոյ աղջի՛կ, Գրգօի կի՛ն, ե՛ս, Շաբ՛ն...
Չէ՛, չե՛մ կարող ասպետութեան ազատ ըլլալ.
Գերեզմանը ողջ ըլլայ։

Աստուա՛ծ գիտէ.
Խրախճա՛նք մ'է ինձ համար, այս մահը.
Ա՛ա ժայռէն վար գլորի՛լը՝ ոճնական
Օ՛ր մը՝ն է, ուր հարս կ'երթամ ես՝ հայրենի
Ազատութեան զաղափարի՛ն պաշտելի։

Արեանս տաքուկ ճապաղիքը գունագեղ՝
Իմ այս անուշ եւ ահաւոր հարսնութեան՝
Ա՛խ, օժի՛տը թող ըլլայ։

Թող հայ կի՛նը.
Հայ կարիճին քո՛վը կեցած անվեհեր,
Թող միատեղ ցնցե՛ն շղթան բռնութեան։
Վկա՛յ Աստուած, ան կը կոտրի՛ և Մասեաց
Խրոխտ սարէն կը նշողէ՛ աստղն հայուն։

Հեղո՛ւկ մը կայ, որ այդ շղթան կը փշրէ
Հեղո՛ւկ մը՝ որ երակնուս մէջ եռ կուգայ։
Արի՛ւնն է ան՝ վարդագոյն։

Ո՛վ Սասունի,
Ո՛վ դուք, լերանց ձիւնըսպիտակ սեպ ժայռեր,
Դո՛ւք ծմակներ՝ աւանդապահ բիւր վշտաց.
Ընդունեցէ՛ք իմ և զաւակիս սիրասուն
Թանկ նուէ՛րը. արիւնը տա՛ք ու ցայտուն։

Անո՛վ ցողուին ձեր քարերը սրբասուն.
Անո՛վ փշրի, շղթան անարդ գերութեան.
Անո՛վ հրճուի՛ Հայաստան։

Տ. Ճգնաւորեան

ՏԱՌԱՊԵԱԼԸ

Հսկայ վանքերուդ՝
—Որք փլան գլխուդ—
Աւերակներուն,
Ըրին ըզքեզ բուն.
Ու Դուն լռեցիր։

Քեզ ձօնուած խունկին՝
Քուրդերը թքին.
Ժամ ու պատարագ,
Ըրին ծաղր ծանակ.
Ու Դուն լռեցիր։

Խաչըդ քառաթեւ՝
Մահիկին առջեւ,
Ջարդ ու բուրդ ըրին,
Ճակտիդ նեռեցին.
Ու Դուն լռեցիր։

Սեպուհէն Մասիս,
Եփրատէն Տիգրիս,
Ծով դարձաւ արիւն՝
Քեզ պաշտող հայուն.
Ու Դուն լռեցիր։

Հարսեր՝ ամուսնուն
Ծոցէն սիրասուն,
Խլեցին տարին՝
Որդիք Ղրպտին.
Ու դուն լռեցիր։

Երկինքէն տեսար
Մանկունք անհամար՝
Ծիծերու վրայ,
Ա՛խ, արիւնլուայ.
Ու Դուն լռեցիր։

Ա՛լ չը կար առողջ
Մէկ հատ արու՝ ողջ՝
Սաղմը արգանդին՝
Սուինի զարկին.
Ու Դուն լռեցիր։

Հրեշտակը ընդ փոյթ
Թափեցան գլխուդ.
«Վերջ տո՛ւր —գոչեցին—
Ահեղ ոճիրին»։
Ու Դուն լռեցիր։

Աստուծոյ որդի՛,
Քարերն իսկ քեզի՝
Պոռ պոռ պոռացին,
«Վերջ տուր նախճիրին».
Ու Դուն լռեցիր։

«Մեռած չէ, ողջ է,
Անքուն կը հսկէ»՝
Կ՚ըսեն քեզ համար,
Էակը անհամար.
Հաւատա՞նք, ի՞նչ կ՚ըսես,
Երբ միշտ կը լռես։

Տ. Ճգնաւորեան

ՉԱՔԸՐԵԱՆ ԿԸ ՊՈՌԹԿԱՅ

(Բնութեան դեմ)

Զարիքներու բոյն
Ո՛վ դու բնութիւն,
Զախջախ քնարիս՝
Որ թելին դպիս,
Քեզ դէմ անպայման
Անէծքներ տեղան։
Կ'ուզե՞ս որ համբեմ
Արարքդ անօրէն։

Զիյան է ըսած
«Ցարափ մարդարտաց՝
Թ'իլնեն ցօղի տեղ
Վերէն՝ զերդ հեղեղ,
Ցայգւոջ դժբաղդին՝
Կաթիլք չ'անկանին»։
Կշռողիդ այդ չար
Կոտրէր ծուռ նժար։

Աշխարհս այս ամբողջ՝
Զէ՞ որ չարեաց որջ՝
—Միշտ ի խոյզ հացի—,
Անհամար լացի
Ըրիր Դու կայան
Անիրաւութեան
Ու մեծ աւերակ՝
Քու ոտքերուդ տակ։

Հանդէպ պալատին՝
Խրճիթն աղքատին.
Հարուստին առաջ՝
Նօթիին հառաչ։

Օրէնքդ ո՞վ դծեց
Ո՞վ ճակատագրեց.
Այդպէս գլոզին
Մատներ կոտրէին։

Մէկին տուիր շատ
Բարիք անաշխատ,
Իսկ միւսին չարիք,
Արցունք ու լալիք։
Այսքան վրան բաց
Վճիռդ ո՞վ կարդաց։
Լեզուդ անարդար
Ցրմատէն չորնար։

Սուր տուիր ձեռքին
Անգութ դահիճին.
Վիզ տուիր Հայուն
Խոնարհ ու նկուն։
Այդ արեամբ կարմիր՝
Գա՞հդ ներկեցիր։
Գահդ ա՛լ, պալատդ ալ,
Գլխուդ դան տապալ։

Ուժ տուիր քրդին՝
Խլել անզօրին
Գրկէն, հարս զաւակ,
Քու աչքերուդ տակ։
Ու Դու լուռ վկան
Եղար պղծութեան...։
Այդ ցած վկային
Աչեր կուրնային։

Յ. Զաքրբեան

ԽՕՍՔ ՀԱՅՈՒՆ

Մռայլին մէջ հնութեան՝ բաղդին հովը քմահաճ՝
Աչխարհիս չորս ծագերէն՝
Ժողվեց բերաւ սէգ ցեղեր՝ սէգ Մասիսին ստորոտ.
Անոնց աչխոյժ ծագերէն՝
Ազգ մը ծնաւ սէգ ւ՝աչխոյժ, բազմալեզու, բազմերանգ,
Որ անտառի մ՝հանգուռնակ՝
Խրուած լերանց կուչտերուն մէջ, զէպի խոր ծմակներ,
Տարածուեցաւ համարձակ։
Քանի՛ քանի՛ անդամներ՝ զայն մրրիկներ կատաղի
Ցօշոտեցին յօտեցին.
Բայց ո՛ւր ինկան իր ոստեր, հոն ձգեցին նոր ծիլեր
Եւ ծառացան դէպ երկին.
Քանի՛ քանի՛ անդամներ, հուրն ու սուրը անխնայ՝
Գետնին ըրին զայն հաւասար
Բայց աճիւնով եւ արեամբ՝ արմատն անմեռ՝ պարարուած՝
Վեր ընձիւղեց միշտ դալար։

* * *

Հաստատ կեցի՛ր՝ ո՞ հայ արմատ, ընկիկ հողիդ՝ ո՛հ կառչած.
Այս փոթորիկն ալ կ՝անցնի.
Դու դարերու ես ծնունդ. երէկուանն է թշնամիդ.
Նա վաղուան մէջ կեանք չունի։
Հաստատ կեցի՛ր, հայ սերունդ, անմեռունակ ժողովուրդ,
Եւ իրաւանցդ եղի՛ր տէր.
Վար գլորէ՛ Մասիսին ամպածրար կողերէն
Անհեթեթ քու պարեխներ.
Դրախտանման երկրիդ շուրջ՝ պարիսպ քաչէ անոնցմով՝
Եւ նոր սիրովը անառիկ
Քու գաւակաց, եօթն անգամ, այդ պարիսպը պարսպէ՛.
Եւ անոր ալ բոլորտիք՝
Արեւելքէն եւ Մուտքէն, Հիւսիսէն եւ Հարաւէն՝
Թնդանօթներ թո՛ղ հսկեն
Լեցուած մեր հին ցաւերով՝ կազմ ու պատրաստ գոռալու՝
Ամբողջ ազգի մը կուրծքէն։

Տ. Ճգնաւորեան

Սոյն գրքուկիս հասոյթը նուիրած եմ ի նպաստ տաճկահայաստանի կարօտեալ աղջիկներու։

ԳԻՆՆ Է 3 ՂՐՈՒՇ (50 կոպէկ)

Հ Խաչատրյան
1992

ՀՀ Ազգային գրադարան
NL0345987